


Ա.Ս. ՊՈՒԾԿԻՆ





175
175





1870

THE UNIVERSITY OF CHICAGO

А. С. Пушкин

Пиковая дама



ГОСИЗДАТ ЕРЕВАН 1 9 3 7.

№ 5
175

891.71

7-90

Ա.Ս. ՊՈՒՇԿԻՆ

300448 1961 թ.

ՊԻԿԵԿԱՅԱ ԴԱՄԱ


(ԱԳՐԱԿ - ԱՂՋԻԿԸ)



2263

A 3511

ՀԱՅ ՊԵՏԼՈՍ - 1937



Պիկո վաղ առաջ (նշանակում ե
դադարձնի անբարյացակամությունն:

Նորագույն գուճակողական գիրք

I

Իսկ վատ յեղանակին

Նրանք հավաքվում եյին

Հաճախ.

Ծաղում եյին՝) — աստված նրանց ներքի —

Հիսունը

Մինչ հարյուր,

Յեկ տանում եյին,

Յեկ դուրս գրում՝

Կալիֆոնի:

Այսպես՝ վատ յեղանակին

Նրանք զբաղվում եյին

Գործով:

Մի անգամ թուղթ եյին խաղում հեծե-
լազորի գվարդիական Նարումովի տանը:
Չմեռային յերկար գիշերն անցավ աննկա-
տելի, ընթրիքի նստեցին առավոտյան ժա-

մի հինգին: Նրանք, ուղքեր տարել եյին՝
մեծ ախորժակով եյին ուտում. մյուսները
մտադրիվ նստած եյին իրենց դատարկ
սպասքի առջև: Սակայն՝ յերևաց Շամպա-
նի գինին, խոսակցությունն աշխուժացավ
և բոլորը մասնակցեցին դրան:

— Ի՞նչ արիր, Սոփիան,—հարցրեց տան-
տերը:

— Տանուկ տվի, սովորականի պես:
Պետք է խոստովանել, վոր յես անբախտ
եմ. խաղում եմ միրանդոլ³⁾ յեղանակով,
յերբեք չեմ տաքանում, վոչնչով ուշքս չես
գրավի, բայց թե միշտ ել տանուկ եմ տա-
լիս:

— Յեւ դու վոչ մի անգամ չդայթակղ-
վեցի՞ր, վոչ մի անգամ չդըլ՞ր ուտի⁴⁾
վրա... Ի՞նչ հաստատամտությունը՝ զարմաց-
նում ե ինձ:

— Հապա Հերմանը,—ասաց հյուրերից
մեկը, ցույց տալով յերկտասարդ ինժեներե-
րին,—ծնված որից ձեռը թուղթ չի վերց-
րել, իր որում մի պարոլի⁵⁾ չի ծալել,

աւակացն մինչև ժամի հինգը նստած ե մեզ հետ և մտիկ ե տալիս մեր խաղին:

— Խաղը սաստիկ հետաքրքրում ե ինձ, —ասաց Հերմանը,—բայց յես ի վիճակի չեմ անհրաժեշտ միջոցներս զոհաբերել այն հոգսով, թե ավելորդը ձեռք կըբերմ:

— Հերմանը գերմանացի յե, նա գիտե իր հաշիվը, այ թե ինչու՞մն ե բանը,—նկատեց Տոմսկին: — Իսկ յեթե կա մեկը, վորը անհասկանալի յե ինձ համար, դա իմ տատիկն ե՝ կոմսուհի Սեննա Ֆեդոտովնան:

— Ինչպե՞ս, ի՞նչ, — ձայնեցին հյուրերը:

— Չեմ կարողանում հասկանալ,—շարունակեց Տոմսկին,—թե ինչպե՞ս ե, վոր իմ տատիկը չի խաղում⁶):

— Ի՞նչ մի գարմանալի բան ե,—ասաց Նարումովը,—վոր ութսուհամյա պառավը թուղթ չի խաղում:

— Ուրեմն դուք վոչինչ չգիտե՞ք նրա ձապին:

— Վոչինչ, իսկապես վոչինչ...

— Ո՛ր, ուրեմն լսեցեք: Պետք ե իմանալ,

վոր իմ տատիկը վաթսուն տարի առաջ
 գնացել էր Փարիզ և այնտեղ մեծ հաջողու-
 թյուններ ունեցել: Ժողովուրդը վազել և
 նրա յետևից՝ la Vénus moscovite⁷⁾ տես-
 նելու համար. Ռիշելյեն⁸⁾ քարշ և յեկել
 նրա յետևից և տատիկս հավատացնում է,
 վոր քիչ է մնացել, թե նա անձնապահու-
 թյուն գործի — իր խառասրտությունից:
 Այն ժամանակ տիկիները խաղալիս են
 յեղել փարավոն⁹⁾: Մի անգամ սլալատում
 նա տանուլ և ապիս Որլյանի գուքսին¹⁰⁾
 մի ինչ վոր խոշոր գումար: Տուն վերա-
 դառնալով տատիկս իր գեմքի վրայից հա-
 նելով արհեստական խալերը և քանդելով
 ֆիժմաները¹¹⁾, սլապիս հայանում է իր
 տանուլ տալու մասին և հրամայում է վը-
 հարել: Հանդուցյալ պապս, վորքան հիշում
 եմ, տատիկիս ծառայապետի պես մի մարդ
 էր, սաստիկ վախենում էր նրանից, սա-
 կայն լսելով տանուլ տված մի այգալիսի
 սոսկալի գումարի մասին, բարկանում և
 հաշիվներ մեջ բերում, ապացուցում նրան

վոր կես տարւիւս ընթացքում ծախսել են
 կես միլիոն, վոր Փարիզի մոտերքը նրանք
 չունեն վոչ մեքձմտակովյան կալւած, վոչ
 ել սարատովյան¹²⁾ գյուղ և կտրականա-
 պես հրաժարովում և վճարումից: Տատիկս
 նրան մի ապտակ և հասցնում և ի նշան
 իր անողորմածության՝ մենակ և պառկում
 քնելու: Մյուս որը նա հրամայում և իր
 մոտ կանչեն ամուսնուն, հուսալով, վոր
 տնային պատիժը ազգած կլինի, սակայն
 նրան տեսնում և անդրդվելի իր կյանքում
 առաջին անգամ տատիկս նստում, դա-
 տումներ և անում ամուսնու հետ և բացատ-
 րություններ տալիս. կարծում ե, թէ կա-
 մաչեցնի նրան, ներողամտաբար ապացու-
 ցելով, վոր ամեն պարտք միատեսակ չի
 լինում և վոր տարբերություն կա իշխանի
 և կառելթագործի միջև:—Ո՞ւմ ես խոսք
 հասկացնում. պապս բունտ և անում: Չե՞
 ու չե՞ Տատիկս չի իմանում ինչ անի նրա
 հետ մոտ ծանոթ և լինում մի նշանավոր
 մարդ: Դուք լսել եք կոմս Սեն-ժերմենի¹³⁾

մասին, վորի անվան շուրջն այնքան ըս-
քանչելի բաներ են պատմում: Դուք գի-
տեք, վոր նա իրեն ցույց եր տալիս վոր-
պես հավիտենական ջհուդ¹⁴), վորպես կեն-
սահյութի¹⁵) և վիլիսոփայական քարի¹⁶)
գլուտարար և այլն: Նրան ծաղրում եյին
վորպես շառլատանի, իսկ Կադանովան¹⁷)
իր հուշերի մեջ ասում ե, վոր նա լրտես
եր. աջնուամենայնիվ, Սեն-ժերմենը, չնա-
յած իր խորհրդավորությանը, շատ հար-
գելի արտաքին ուներ և հասարակության
մեջ շատ սիրալիր մարդ եր: Տառս մինչև
հիմա ել անչափ սիրում ե նրան և բար-
կանում ե, յերբ հարգանքով չեն խոսում
նրա մասին: Տառս դիտեր, վոր նա կարող
եր ունենալ մեծ գումարներ: Նա վորոշում
ե դիմել նրա ռոմանթյանը: Գրում ե նրան
մի յերկտող և խնդրում՝ անհապաղ իր մոտ
դալ: Ծեր խեղճավունը իսկույն հայտնվում
ե և տատիս տեսնում սարսափելի վշտի
մեջ: Ամենասե գույներով նա նկարագրում
ե ամուսնու բարբարոսությունը և, ի վերջո,

ասում, վոր իր բոլոր հուշար դնում ե նրա բարեկամության և սիրալիրության վրա։ Սեն-Ժերմենը փոքր ինչ միտք ե անում։ — «Յես կարող եմ ձեզ ծառայություն մատուցել այդ գումարով,—ասում ե նա,—սակայն գիտեմ, վոր դուք հանգիստ չեք լինի, մինչև վոր չհատուցեք ինձ, մինչդեռ յես չեյի կամենա ձեզ նոր հոգսերի մեջ ձգել։ Կա մի այլ միջոց. դուք կարող եք յետ բերել ձեր տանուլ տվածը»։ — «Բայց, սիրելի կոմս,—պատասխանում ե տատիկս,—յես ասացի ձեզ, վոր մենք գրամ չունենք բնավ»։ — «Այդտեղ գրամի կարիք չկա,—առարկում ե Սեն-Ժերմենը,—հաճեցեք լսել ինձ։ Այս ասելով նա մի գաղտնիք ե բացում տատիս, գաղտնիք, վորի համար մեզնից յուրաքանչյուրը շատ թանկ կվճարեր...

Յերիտասարդ խաղացողները կրկնապատկեցին իրենց ուշադրությունը։ Տոմսերն վառեց ծխամորճը, ծուխը ներս քաշեց և շարունակեց.

— Հենց նույն յերեկոյան տառտ հայտնվում ե վերսալում¹⁸⁾, au jeu de la Reine¹⁹⁾: Թուղթ բաժանողը²⁰⁾ Որլյանի դուքսն ե լինում. տառտ թեթևակի ներդաշնակ ե խնդրում, վոր չի բերել իր պարտքը ե վորպէս արդարացում մի վորքիկ պատմությունն ե հորինում ու սկսում ե նրա դեմ խաղալ: Նա ընտրում ե յերեք թուղթ ե մեկը մշուսի հետեից դնում. բոլոր յերեքն ել նրա համար շահում են սոնիկ²¹⁾ ե տառտ հետ ե բերում տանուլ տալածը:

— Պատահմեղնք, — ասաց հյուրերից մեկը:

— Հեքիաթ ե,—նկատեց Հերմանը:

— Կարելի չե, թե վորշեծածկ²²⁾ թղթի՞ր են յեղել,—վրա բերեց յերրորդը:

— Չեմ կարծում,—հանդիսավոր կերպով պատասխանեց Տոմսիկին:

— Ի՜նչպիս, — ասաց Նարումովը, — դու տառ ունեօ, վորը յերեք թուղթ իրար յետեից ե նախագուշակում, ե դու մինչև

հիմա նրանից չէս սովորել նրա կարալիս-
տիկան²³):

— Բաս, ինչպես չե, — պատասխանեց
Տոմսկին, — նա չորս վորդիներ ուներ, աչդ
թվում և իմ հաշրը. բոլոր չորսն ել թունդ
խաղամուկներ եյին և նրանցից վոչ մե-
կին նա չբացեց իր գաղտնիքը, թեև դա
վատ չէր լինի նրանց և մինչև իսկ ինձ
համար: Բայց ահա թե ի՛նչ պատմեց հո-
րեղբայրս՝ կոմս Իվան Իլյիչը և այդ բանն
ինձ հալատացնելիս նա իր պատվով եր
յերդվում: Հանգուցյալ Չասլիցկին, հենց
նա, վոր չքավորության մեջ մեռավ մի-
լիոններ վասնելուց հետո, մի անգամ իր
յերիտասարդության ժամանակ տարվում
ե—հիշում եմ՝ Ջորիչին²⁴), — մոտ յերեք
հարյուր հազար: Նա հուսահատության մեջ
և ընկնում: Տառս, վոր միշտ խիստ եր
վերաբերվում յերիտասարդների չարած-
ճիություններին, ինչպես և լինում՝ խղճում
և Չասլիցկուն: Տալիս և նրան յերեք
թուղթ այն պայմանով, վոր նա գրանք

մեկը մյուսի յետևից դնի և նրանից աղնիւ
խոսք եւ առել այլևս յերբեք թուղթ չխա-
ղալ: Չապլիցկին ներկայանում և իրեն
հաղթողին, նստում են խաղալու: Չապլից-
կին առաջին թղթի համար դնում և հիսուն
հազար ուրլի և սոնիկը տանում, պարոլի,
պարոլի-պե²⁵) և ծալում—յետ քերում տա-
նուլ տվածը և դեռ մի բան եւ ավելի:
Սակայն՝ ժամանակ և քնելու, արդեն
վեցից պակաս և քառորդ:

Իւոք, արդեն լուսանում եր, յերիտա-
սարդները դատարկեցին զավաթները և
մեկնեցին իրենց տները:

— Il paraît que monsieur est
décidément pour les suivantes.

— Que voulez-vous, madame?
Elles sont plus fraîches²⁶).

Եւթարհիկ խոսակցութիւն

Պառավ կոմսուհի***-ը նստած եր իր
ղզեցարանում հայելու առջև: Յերեք աղ-
ջիկներ շրջապատել ելին նրան: Մեկը
բռնել եր կարմրաշաւարի անոթը, մյուսը՝
հերակալներով լի տուփը, չերբոբը՝ բարձ-
րագիր մի չեսպեց²⁷) հրազուն ժապավեն-
ներով: Կոմսուհին մազաչափ անգամ պա-
հանջկոտութիւն չուներ դեպի վաղուց
թառամած զեղեցկութիւնը, սակայն պա-
հել եր իր ջահելութեան բոլոր սովորու-
թիւնները, խստորեն հետեւում եր յոթա-



նասուճակաճի թվականների մողաներին և հաղնվում եր նույնքան յերկար, նույնքան խնամքով, ինչպես և վաթսուճ տարի առաջ: Պատուհանի մոտ՝ քարգահի առաջ նստած եր մի որիորդ, նրա սանուհին:

— Վողջուճ, grand' maman²⁸), —ասաց յերիտասարդ սպան ներս մտնելով: — Bon jour, mademoiselle Lise. Grand'maman²⁹), մի խնդիր ունեմ ձեղ...

— Ի՞նչ և, Paul³⁰).

— Թույլ տվեք ձեզ ներկայացնել իմ բարեկամներից մեկին և հինգշաբթի որը նրան բերել ձեզ մոտ՝ պարահանդես:

— Բեր նրան ուղիղ պարահանդես՝ ինձ մոտ և այնտեղ ել կներկայացնես ինձ: Յերեկ դու յեղամբ ***-ի մոտ:

— Ի՞նչպես չե. շատ ուրախ անցավ. պարեցինք մինչև ժամի հինգը: Ի՞նչ գեղեցիկն եր Յեկեկայան:

— Ե՛հ, սիրելիս: Ի՞նչ մի լավ բան կա նրանում: Բնավ այդպիսին չեր նրա տատը՝ իշխանուհի Դարյա Պետրովնան: Ի՛ դեպ,

յես կարծում եմ, վոր նա արդեն ծերացել է, իշխանուհի Դարյա Պետրովնան:

— Ի՞նչ, ծերացել է,— ցրված պատասխանեց Տոմսկին,— յոթ տարի յե ինչ մեռել է:

Որիորդը գլուխը բարձրացրեց և նշան արեց յերիտասարդին: Նա հիշեց, վոր պառավ կոմսուհուց թաքցնում էյին նրա հասակակցուհու մահը և կծեց իր շրթունքը: Սակայն կոմսուհին մեծ անտարբերությամբ լսեց իր համար նոր լուրը:

— Մեռել է,— ասաց նա.— իսկ յես չեյի ել իմանում: Մենք միասին ելինք ֆրեյլինի³¹⁾ կոչում ստացել և յերբ ներկայացանք թագուհուն, ասլա նա...

Յեվ կոմսուհին հարյուրերորդ անգամ թոռին պատմեց իր անեկդոտը:

— Դեհ, Paul,— ասաց նա հետո.— հիմա ոգնիր ինձ վեր կենամ: Լիզանկա, ո՞ւր ե իմ քթախոտի տուփը:

Յեվ կոմսուհին իրեն սպասավորող աղջիկներին հետ անցավ շիրմայի յետեւ՝ իր

արդուզարդը ավարտելու: Տոմսկին մնաց
որիորդի հետ:

— Ո՞ւմն եք ուղում ներկայացնել կոմ-
սուհուն,—կամացուկ հարցրեց Լիզավետա
Իվանովնան:

— Նարումովին: Դուք ճանաչո՞ւմ եք
նրան:

— Վոչ: Նա զինվորականն է, թե քաղա-
քացիական պաշտոնյա...

— Զինվորական է:

— Ինժեներ՞:

— Վոչ. հեծելակ է: Իսկ դուք ինչո՞ւ
եյիք կարծում, վոր նա ինժեներն է:— Որի-
որդը ծիծաղեց և վոչ մի բառ չարտասա-
նեց:

— Paul, — կանչեց կոմսուհին շիրմայի
յետևից, — ինձ մի վորեւս ուման ուղարկիր,
միայն, խնդրեմ՝ վոչ այժմյան ումաններից:

— Ի՞նչպես թե, grand'maman?

— Այսինքն մի տյնպիսի ուման, վորի
մեջ հերոսը չի խեղդում վոչ հորը, վոչ
մորը և մեջը չլինեն ջրահեղձ մարդիկ:

Յես սաստիկ վախենում եմ ջրահեղձներից:

— Հիմա չկան այդպիսի ոռոմաններ:
Միթե չեք ուզում ոռուսերեն ոռոմաններ:

— Միթե ոռուսերեն ոռոմաններ կան...
Ուզարկիր, սիրելիս, խնդրում եմ, ուզարկիր:

— Ներեցեք, grand'maman, յես շտապում եմ... Ներեցեք, Լիզավետա Իվանովնա: Ինչո՞ւ ելիք կարծում, վոր Նաբումովը ինժեներ ե:

Յիվ Տոմսկին դուրս յեկավ զգեցարանից:

Լիզավետա Իվանովնան մնաց մենակ. նա թողեց ձեռագործը և սկսեց պատուհանից դուրս նայել: Շուտով վողոցի մի կողմում՝ անկյունի տան այն կողմից յերևաց մի յերիտասարդ սպա. կարմրությունը ծածկեց որիորդի այտերը. նա նորից անցավ իր աշխատանքին և գլուխը կախեց ուղիղ հենքի վրա: Այդ ժամանակ ներս մտավ կոմսուհին, հագած-պատրաստ:

— Լիզանկա, հրամայի, — ասաց նա, —
կառնի՞ր լծեն, գնանք զբոսնելու:

Լիզանկան քարվահը թողեց և սկսեց
ձեռագործը հավաքել:

— Ի՞նչ ե, խլացել ես, սիրելիս, — բղա-
վեց կոմսուհին: — Հրամայի շուտով կառնի՞ր
լծեն:

— Իսկուհն, — կամացուկ պատասխանեց
որիորդը և վաղեց նախասենյակ:

Ներս մտավ ծառան և կոմսուհուն տվեց
իշխան Պավել Ալեքսանդրովիչի ուղարկած
գրքերը:

— Լնով: Շնորհակալութուն հայտնիր,
— ասաց կոմսուհին: — Լիզանկա, Լիզանկա.
ո՞ւր ես վաղուհի:

— Հագնվելու:

— Կհասցնես, սիրելիս: Նստիր այստեղ:
Հասկա մի բաց արա առաջին հատորը,
կարդա բարձր...

Որիորդը գիրքը վերցրեց և կարդաց մի
քանի տող:

— Բնրձր, — ասաց կոմսուհին: — Ի՞նչ ե

պատահել քեզ, սիրելիս, ձայնդ կտրվե՞լ ե,
ինչ ե... Կնոջ. աթոռդ մոտեցրու ինձ. ավելի
մոտ... դեհ:

Լիզավետա Իվանովնան կարդաց նորից
յերկու եջ: Կոմսուհին հորանջեց:

— Թող այդ գիրքը, — ասաց նա, — այ
քեզ հիմար բան: Յետ ուղարկիր իշխան
Պավելին և հրամայի, վոր շնորհակալու-
թյուն հայտնեն... Ի՞նչ յեղով կառեթը...

— Կառեթը պատրաստ ե, — ասաց Լիզա-
վետա Իվանովնան, մի հայացք նետելով
դեպի փողոց:

— Ինչո՞ւ դու հագնված չես, — ասաց
կոմսուհին, — միշտ պետք ե քեզ սպասել:
Դա անտանելի յե, սիրելիս:

Լիզան վազեց իր սենյակը: Չանցավ
յերկու բոպե՝ կոմսուհին սկսեց դանդահա-
րել վորքան ույժ ունե՞ր: Յերեք աղջիկներ
վազեցին մի դռնով, իսկ սենեկապանը՝
մյուսով:

— Ա՛յս ինչ բան ե, ձեզ կանչել չի լի-
նի, — ասաց նրանց կոմսուհին: — Ասացեք

Լիզավետա Իվանովնային, վոր սպասում եմ
ներան:

Լիզավետա Իվանովնան՝ ներս մտավ
կապտաը³²⁾ հագին և վոքրիկ գլխարկ զը-
րած:

— Վերջապես չեկար, սիրելիս,—ասաց
կոմսուհին:— Ես ինչ դուքս ե: Դն ինչու
համար ե... Ո՞ւմ պիտի հրապուրես... Ինչ
չեղանակն ինչ տեսակ ե—կարծես քամի
յե:

— Բոլորովին վոչ, ձերգ պայծառափայ-
լություն: Շատ հանդիստ ե,—պատասխա-
նեց սենեկապանը:

— Դուք միշտ առանց մտածելու չեք
խոսում: Ողանցքը բացեք: Այդպես ել կա-
քամի յե, այն ել՝ սառը: Կառեթը մնա:
Լիզանկա, մենք չենք գնա. կարիք չկար
զուգվել-զարգարվելու:

— Այս ել իմ կյանքը,—մտածեց Լիզա-
վետա Իվանովնան:

Իրոք, Լիզավետա Իվանովնան ամենա-
անբախտ արարածն եր: Դառն ե ոտարի

հայրը, ասում ե Դանտեն և դժվար են ուտարի տան դռան առաջնանները³³⁾ և ո՞վ չիմանա ուրիշից կախում ունենալու դառնությունը, չեթե վոչ նշանավոր պառավի խեղճ սանուհին: Կոմսուհի ***-ը խնարկե չարասիրտ չեր, սակայն քմահաճ եր վորպես շրջապատողներից չերես առած, կին, ժլատ եր, սառը յետամուտությամբ տողորված, ինչպես և բոլոր ծեր մարդիկ, վորոնք սիրելիչտացել են իրենց կյանքում և խորթ են ներկային: Նա մասնակցում եր բարձր հասարակության բոլոր դատարկաբանություններին, քարշ եր դալիս պարահանդեսներում, ուր նստում եր անկյունում, չերեսը կարմիր շպարով պատած և հին մոգայով հագնված, վորպես պարահանդեսի գահլիճի ալյանդակ ու անհրաժեշտ մի զարդարանք. խոնարհ վողջունելով, վորպես ռանմանված ծիսակատարություն, նրան մոտենում եյին յեկող հյուրերը և հետո ալիս վոչ վոք չեր ըզգաղվում նրանով: Իր տանը նա ընդունում

ևր ամբողջ քաղաքի բնակիչներին, պահ-
 պանելով խիստ վարվելակարգ և դեմքով
 վոչ վոքի չճանաչելով: Նրա բաղմամբով
 սպասավորները ճարպակալելով և ծերանա-
 լով նրա նախասենյակում, անուժեյին այն,
 ինչ քեֆները տալիս էր, անընդհատ թա-
 լանելով մեռնող սլառավին: Լիզավետա
 իվանովնան նրա տան նահատակն էր: Նա
 թեյ էր լցնում ու հանդիմանություններ
 ստանում շաքարը չափից ավելի ծախսելու
 համար. նա բարձր ձայնով ոռոմաններ էր
 կարդում և մեղավոր էր հեղինակի բոլոր
 սխալների համար. նա ուղեկցում էր կոմ-
 սուհուն նրա զրոստանքների միջոցին և սլա-
 տասխանատու չէր վատ յեղանակի ու վատ
 սալհատակի համար: Ռոճիկ էյին նշանա-
 կել, վորը յերբեք լրիվ չէյին վճարում
 նրան ու մինչդեռ սլահանջում էյին, վոր
 նա հազնված լինի ինչպես բոլորն էյին
 հազնվում, այսինքն՝ ինչպես շատ քչերը:
 Բարձր հասարակության մեջ նա ամենա-
 խղճուկ դերն էր խաղում: Բոլորը գիտեյին

նրան և վոչ-վոք չեր նկատում նրան. պա-
 րահանդեսներին նա պարում եր միայն այն
 ժամանակ, յերբ պակասում եր vis-à-vis³⁴),
 և տիկիներն եր նրան թեանցուկ ելին ա-
 նում միայն այն ժամանակ, յերբ նրանց
 պետք եր լինում զգեցարան գնալու՝ իրենց
 զուգքի այս կամ այն մասը հարգարելու
 համար: Նա ինքնասեր եր, սուր կերպով
 զգում եր իր գրությունը և շուրջն եր նա-
 յում,—նա անհամբեր սպասում եր իր ա-
 զատարարին. սակայն յերիտասարդները,
 վորոնք իրենց թեթևամիտ սնապարծու-
 թյան մեջ հաշվով ելին շարժվում, նրան
 չեյին արժանացնում իրենց ուշադրու-
 թյանը, թեպետ Լիզավետա Իվանովնան
 հարյուր անգամ գեղեցիկ եր լիտի ու խըս-
 տասիրտ հարսնացուներից, վորոնց շուրջը
 նրանք պտույտ ելին գալիս: Քանի՞ քանի՞
 անգամ, հուշիկ թողնելով տաղտուկ ու
 փարթամ հյուրասրահը, նա քաշվում եր
 իր խղճուկ սենյակը. լաց լինելու, ուր գըր-
 ված ելին պաստառած շիրմաներ, կամոդ,

հայելիի և ներկած մահճակալը և ուր աղոտ լույս եր տալիս դեղին մոմակալին հագցըված ճարպամոմը:

Մի անգամ,— դա պատահեց այս վիպակի սկզբում նկարագրած յերեկոյից յերկու որ հետո և մի շաբաթ առաջ այն տեսարանից, վոր նկարագրեցինք,— մի անգամ Լիզամիտա ի վանոյնն պատահանի առաջ քարգահի մոտ նստած աշխատելիս ինչպես յիդով նայեց փողոց և տեսավ մի յերիտասարդ ինժեներ, վորը անշարժ կանգնած աչքերը սեւեւել եր դեպի նրա փոքրիկ պատահանը: Նա խոնարհեց գլուխը և վերըստին դրադովից իր աշխատանքով: Կինգրոպեյից հետո նորից նայեց— յերիտասարդ սպան կանգնած եր միևնույն տեղում: Սովորությունն չունենալով կռքեսություն անել անցորդ սպաների հետ, նա դադարեց փողոց նայելուց և մոտ յերկու ժամ կարում եր առանց գլուխը բարձրացնելու: Ճաշը բերին: Նա վեր կացավ, սկսեց հավաքել իր քարգահը և պատահարար փողոց

նայելով՝ նորից տեսավ սպային: Դա բա-
վական ռաարոտի թվաց նրան: Ճաշից հե-
տո նա պատուհանին մոտեցավ մի ինչ-վոր-
անհանգստության զգացումով, սակայն
սպան այլևս չկար – և նա մոռացավ նրա
մասին...

Յերկու որ հետո կոմսուհու հետ տանից
դուրս գալիս նա նորից տեսավ նրան:
Սպան կանգնած եր հենց դռան մոտ, դեմքը
կլրենու³⁵) մորթուց կարած ոձիքով ծած-
կած. նրա սև աչքերը փայլում էին գըլ-
խարկի տակից. էիզավետա Իվանովնան
վախեցավ, ինքն ել չիմանալով ինչից և
կառկթ նստեց անբացատրելի սրտդողով:

Տուն վերադառնալուն պես նա վազեց
դեպի պատուհանը, — սպան կանգնած եր
իր նախկին տեղում, աչքերը իրեն սևեռած.
նա հեռացավ պատուհանից, հետաքրքրու-
թյունի տանջվելով և իր համար միան-
գամայն նոր զգացումով հուզված:

Այդ ժամանակվանից որ չեր անցնում,
վոր յերիտասարդը վորոշյալ ժամին հայտ-

Նըվեր նրանց տան պատուհաններէի տակ։
Նրա և որիորդի միջև հաստատովիցին չը-
պայմանավորված հարարերություններ։ Իր
տեղում ձեռագործով զբաղված նա զգում
էր նրա մոտենալը, բարձրացնում էր
գլուխը, նայում նրան որորի վրա ավելի
յերկար ու յերկար։ Թվում էր, թե յերկ-
տասարդը շնորհակալ էր նրանից այդ բանի
համար. ջահելության սուր հայացքով նա
տեսնում էր, թե ինչպե՞ս կարմրությունն
արագ ծածկում է նրա գունատ աչտերն
ամեն անգամ, յերբ նրանց հայացքները
հանդիպում ելին միմյանց։ Մի շարաթից
աղջիկը ժպտաց նրան։

Յերբ Տոմսկին թույլտվություն խնդրեց
կոմսուհուց՝ իր ընկերոջը ներկայացնելու,
խեղճ աղջկա սիրտը թունդ չեւաւ։ Սակայն,
իմանալով, վոր Նարումովը ինժեներ չէ,
այլ հեծյալ գվարդիական, նա ամիսոսաց,
վոր անհամեստ հարցով իր գաղտնիքը հայտ-
նել է թեթեամիտ Տոմսկուն։

Հերմանի հայրը ուստացած գերմանացի

չեր, վորը նրան թողել եր մի փոքրիկ դրա-
 մագլուխ: Հաստատ համոզված լինելով իր
 անկախությունը ամրապնդելու անհրաժեշ-
 տության մեջ, Հերմանը ձեռք չեր տալիս
 մինչև իսկ տոկոսներին, ապրում եր սոսկ
 ռոճիկով, իրեն չթույլատրելով ամենաչնչին
 փափագելի բանն անգամ: Սակայն նա
 ծածկամիտ եր ու փառասեր և ընկերները
 քիչ գեպքերում կարող եյին ծիծաղել նրա
 ավելորդ խնայողության վրա: Նա զորեղ
 կրքերի և կրակոտ յերևակայության տեր
 մարդ եր, սակայն հաստատակամությունը
 փրկեց նրան յերիտասարդության սովորա-
 կան մոլորություններից: Այսպես որինակ,
 չողով խաղամուլ լինելով՝ նա յերբեք ձեռը
 թուղթ չեր առնում, քանի վոր հաշիվ եր
 անում, թե իր վիճակը թույլ չի տալիս
 (ինչպես ինքն եր ասում) անհրաժեշտը
 չօհարերելու՝ ավելորդը ձեռք
 բերելու հոսյսով, — մինչդեռ ամբողջ
 գիշերներ նստում եր թղթախաղի սեղանի

առջև և տենդային դողով հետևում խաղի
տարբեր ընթացքին:

Յերեք խաղաթղթերի մասին պատմած
անեկդոտն ուժեղ ներդործություն տրավ
նրա յերևակացության վրա և ամբողջ գի-
շեր չհնոացավ նրա մտքից:—Ի՞նչ կլինի,
յեթե,—մտածում եր նա մշուս ուր յերեկո-
յան Պետերբուրգի փողոցներում թափառե-
լիս,—յեթե պառավ կոմսուհին ինձ բացի
իր գաղտնիքը—կամ ինձ հայտնի այդ յե-
րեք ճիշտ քարտերը: Ինչո՞ւ չփորձեմ բախտս:
Ներկայանամ նրան, մի կերպ ձեռք բերեմ
նրա վողորմածությունը, — թերևս դառնամ
նրա սիրեկանը,—բայց այս բոլորի համար
ժամանակ և պետք—իսկ նա ութսունչոթ
տարեկան ե,—նա կարող ե մեռնել մի շա-
բաթից,—յերկու ուրից... Հապա լսածս
անեկդոտը... Կարելի՞ ե արդյոք հալատ
բնծայել դրան... Վո՞չ: Հաշիվ, հափափորու-
թյուն և ջանասիրություն. ահա իմ յերեք
հալատարիմ քարտերը. ահա թե ինչը կեռա-
պատկի, կյոթնապատկի իմ կապիտալը և

ինձ անդորրություն ու անկասկածություն
կա:—

Այսպես դատելով նա հանկարծ իրեն
տեսաւ Պետերբուրգի գլխավոր փողոցնե-
րից մեկում, հին ճարտարապետությամբ
շինված մի տան առջև: Փողոցը բռնված էր
կառքերով, կառեթները մեկը մյուսի յե-
տեկից արագ մոտենում էին մի լուսավոր-
ված շքամուտի: Կառեթների միջից բոլե-
առ բոլե դուրս եր մեկնվում մերթ ջահել
գեղեցկուհու բարեկալմ վուտը, մերթ՝ շառա-
չուն բոտֆորտը³⁶), մերթ գոլավոր գուլպան
ու դիվանագետի կոշիկը: Պարթևաշուք
շվեյցարի մոտով արագ անցնում էին
մուշտակներն ու թիկնոցները: Հերմանը
կանգ առաւ:

— Սա ճւղ մտենն է,— հարցրեց նա ան-
կյունի վոստիկանական պահակին:

— Կոմսուհի ***-ի, պատասխանեց պա-
հակը:

Հերմանի սիրտը թունդ ելաւ: Զարմա-
նալի անեկդոտը նորից հայտնվեց նրա

յերևակայության մեջ: Նա սկսեց քայլել
 տան մոտերքում, մտածելով տան տիրու-
 հու և նրա հրաշալի ընդունակության մա-
 սին: Ուշ վերադարձալ նա իր համեստ
 անկցունը. յերկար չեր կարողանում քնել
 և յերբ քունը տիրեց նրան, աչքին յերե-
 վացին թղթեր, կանաչ սեղանը, թղթադրամ-
 ների կապոցներ և չերվոնեցյների կույտեր:
 Թուղթ թղթի յետևից դնում եր նա, վճռա-
 կանապես ծալում անկյունները, անդադար
 տանում եր և վոսկին կիտում իր առջև ու
 թղթադրամները դնում գրպանը: Ուշարթ-
 նանալով նա ախ քաշեց՝ իր չերևակայա-
 կան հարստության չքանալու համար, նո-
 րից դնաց քաղաքում թափառելու և նորից
 հայտնվեց կոմսուհի *** տան առջև: Կար-
 ծես մի անհայտ ուժ նրան դեպի այդ տունն
 եր քաշում: Նա կանգ առավ և սկսեց նա-
 յիլ պատուհաններին: Մեկում նա տեսավ
 մի թխահեր փոքրիկ գլուխ, վրը թեքված
 եր, հավանաբար զրքի կամ աշխատանքի

վրա: Գլուխը բարձրացաւ: Հերմանը տե-
սաւ նրա թարմ, դեղեցիկ դեմքն ու սև
տաքերը: Այդ վայրկյանը վճռեց նրա
բախտը:

III

Vous m'écrivez, mon ange,
des lettres de quatre pages plus
vita que je ne puis les lire³⁷).

Նամակագրութուն

Հազիվ իրզավետա իվանովիան կարողացավ հանել կապտուը և գլխարկը, յերբ կոմսուհին ձարդ ուղարկեց նրան կանչելու և հրամայեց նորից գուրս բերել կառեթը: Նրանք գնացին նստելու: Հենց այն ժամանակ, յերբ յերկու սպասավորներ պառավին բարձրացրին ու ներս մտցրին կառեթի դռնակների միջով, իրզավետա իվանովիան հենց անխփ մտաւ տեսավ իր ինժեներին. վերջինս բռնեց նրա ձեռքը. վախից որիորդն իրեն կորցրեց, յերիտասարդն անհետացավ, նամակը մնաց որիոր-

դի ձեռքում: Նա այն թաղցրեց ձեռնոցի արանքում և ամբողջ ճանապարհին վռչինչ չեր լսում ու տեսնում: Կոմսուհին սովորություն ուներ կառնթում նստած ժամանակ ամեն բոլե հարցեր տալ. այդ հանդիպեց մեզ—*Բնչպե՞ս ե կռչվում այս կամուրջը, Բնչ ե դրած այնտեղ՝ ցուցանակի վրա: Լիզավետա Իվանովնան այս անգամ տալիս եր անսպասելի պատասխաններ, ինչ վոր լեզվին գալիս եր, և բարկացրեց կոմսուհուն:*

— Բնչ յեղավ քեզ, այ աղջիկ: Ապրիլ ես կտրել, ինչ ե: Դու կամ չես լսում ինձ, կա՛մ՝ չես հասկանում: Փառք աստծո, յես թոթովախոս չեմ և խելքս դեռ չեմ կորցրել:

Լիզավետա Իվանովնան չեր լսում նրան: Տուն վերադառնալուն պես նա վազեց իր սենյակը, ձեռնոցի միջից հանեց նամակը. դա կնքված չեր: Լիզավետա Իվանովնան կարդաց այն: Նամակը սիրո խոստովանություն եր բովանդակում, զրված եր քնքշա-

լից, հարգանքով և բառ առ բառ արտա-
դրված եր գերմանական ռոմանից: Սակայն
Լիզավետա Իվանովնան գերմաներեն չգի-
տեր և շատ դոհ եր նամակից:

Սակայն իր ընդունած նամակը սաստիկ
անհանգստացնում եր նրան: Առաջին ան-
գամն եր, վոր նա գաղտնի, սերտ հարա-
բերության մեջ եր մտնում յերիտասարդ
մի տղամարդու հետ: Յերիտասարդի հան-
դըգնությունը սարսափեցնում եր նրան:
Նա իրեն նախատում եր անդգույշ վարվե-
ցողության մեջ և չգիտեր՝ ինչ աներ. դա-
դարնր արդյոք պատուհանի մոտ նստելուց
և անուշադրությամբ սառեցներ յերիտա-
սարդ սպայի հետագա հետապնդումների
փափագը՝ արդյոք չետ չուղարկի՞ նրան
նամակը—սառն ու կտրուկ չպատասխանի՞:
Զկար մեկը, վորի հետ նա խորհրդակցեր,
նա վո՛չ ընկերուհի ուներ, վո՛չ դաստիա-
րակչուհի: Լիզավետա Իվանովնան վճռեց
պատասխանել:

Նա նստեց փոքրիկ գրասեղանի առջև,

վերցրեց գրիչը, թուղթը,—և մտածմունքի
 մեջ ընկավ: Մի քանի անգամ նա սկսեց
 նամակը և պատուեց. մեկ՝ արտահայտու-
 թյուններն ելին թվում նրան չափից դուրս
 ներողամիտ, մեկ անչափ դաժան: Վերջա-
 պես նրան հաջողվեց գրել մի քանի տող,
 վորոնցով նա գոհ մնաց: «Յես հավատացած
 եմ,—գրում եր նա,—վոր դուք ազնիվ դի-
 տավորություններ ունեք և վոր չեք կա-
 մենա ինձ վիրավորել անխոհեմ արար-
 մունքով. բայց մեր ծանոթությունը չը-
 պետք ե սկսվի այս կերպ: Ձեզ եմ վերա-
 դարձնում ձեր նամակը և հուսով եմ, վոր
 ոյսուհետև պատճառ չեմ ունենա վանդառ-
 վելու անիրավացի անհարգալից վերաբեր-
 մունքի համար»:

Մյուս որը, տեսնելով յեկող Հերմա-
 նին, Լիզավետա Իվանովնան վեր կացավ
 քարգահի առջևից, դուրս չեկավ դահլիճ,
 բացեց ողանցքը և նամակը փողոց շարտեց,
 հույս դնելով չերիտասարդ սպայի ճարպ-
 կության վրա: Հերմանը վրա վազեց

վերցրեց այն և մտավ հրուշակարանը։
Կնիքը պոկելով նա գտավ իր նամակը և
Լիզավետա Իվանովնայի պատասխանը։ Նա
գրան ել սպասում եր և վերադարձավ
տուն, սաստիկ տարված իր խարդավանքով։

Դրանից յերեք ու հետո մի ջանել ա-
րագաշարժ աչքերով մամղել³⁸) Լիզավետա
Իվանովնային մի փոքրիկ զրություն բե-
րեց մողայի կրպակից։

Լիզավետա Իվանովնան անհանդստու-
թյամբ րացեց այն, նախատեսելով դրա-
մական պահանջներ և հանկարծ ճանաչեց
Հերմանի ձեռքը։

— Դուք, հոգյակս, սխալվել եք,—ասաց
նա.—այս զրությունն ինձ չի ուղղված։

— Վոչ, իսկ և իսկ ձեզ,—պատասխա-
նեց համարձակ աղջիկը, չթաքցնելով խո-
րամանկ ժպիտը։—Հաճեցեք կարդալ։

Լիզավետա Իվանովնան արագ աչքի
անցրեց զրությունը։ Հերմանը տեսակցու-
թյուն եր պահանջում։

— Չի կարող պատահել,—ասաց Լիզա-

վետա իվանովնան, վախենալով թե պահանջների շտապողականությունից և թե նրա գործադրած յեղանակից:—Այս նամակը իրոք վոր ինձ չի ուղղած:—Ու նամակը պատռտեց մանր կտորների:

— Թե վոր նամակը ձերը չեր, հապա ինչո՞ւ պատռտեցիք, — ասաց մամղելը. — չես կվերադարձնե՞լի նրան՝ ո՞վ ուղարկել էր այն:

— Խնդրե՞մ, հոգյալս, — ասաց Լիզավետա իվանովնան, բռնկվելով նրա նկատողությունից. — սրանից հետո ինձ նամակներ չբերեք: Իսկ նրան, ով ուղարկել է ձեզ, ասեցեք, վոր նա պետք է վոր ամաչի...

Բայց Հերմանը չեր դադարում: Լիզավետա իվանովնան ամեն ուր նրանից նամակներ եր ստանում մերթ աչս, մերթ ուրիշ յեղանակով: Դրանք արդեն թարգմանված չեյին գերմաներենից: Հերմանը գրում եր կրքից ներշնչված և խոսում իրեն հատուկ լեզվով. նամակների մեջ արտահայտվում եր թե նրա ցանկություն-

W ների անդրդիելիությունը և թե՛ անսահման
յերևակալության շփոթը: Լիզավետա Իվա-
նովնան ալեւս չեր մտածում դրանք յեա-
ռադարկելու. նա արբենում եր նրանցով.
սկսեց պատասխանել.— և նրա նամակները
հետզհետե դառնում եյին ավելի յերկար ու
ավելի քնքուշ: Վերջապէս նա պատուհա-
նից հետեյալ նամակը քցեց նրան.

— «Այսոր պարահանդես կա ***-ական
դեսպանի տանը: Կոմսուհին այնտեղ կլինի:
Մենք կմնանք մինչև ժամը յերկուսը: Ահա
ձեզ առիթ ինձ միայնակ տեսնելու: Հենց
վոր կոմսուհին կմեկնի, նրա մարդիկ,
հավանորեն, կցրվեն, սրահում կմնա միայն
շվեյցարը, բայց նա եւ սովորաբար քաշ-
վում ե իր խցիկը: Յեկեք տասներկուսի
կեսին: Քալեցեք ուղիղ դեպի սանդուխքը:
Յեթե նախասենյակում մարդ հանդիպի,
այդ դեպքում հարցրեք՝ տա՛նն և արդ՛յոք
կոմսուհին: Ձեզ կասե՛ն, վոր՝ վոչ—եւ ճար-
ներդ ի՛նչ: Պետք ե վերադառնաք: Բա՛ցց
հավանաբար դուք վոչ-վոքի չեք հանդիպի:

Աղջիկները նստած կլինեն իրենց սենյակում, բոլորը միասին: Նախասենյակից գնացեք ձախ, դիմեցեք ուղիղ մինչև կոմսուհու ննջարանը: Ննջարանում շիրմայի յետևում կանգնեք յերկու փոքրիկ դռնակներ, աջից՝ դեպի կարինետը, ուր կոմսուհին յերբեք չի մտնում, ձախից՝ միջանցքը և հենց այդտեղ մինեղ վոլորուեն սանդուղք կա. դա դեպի իմ սենյակն ե տանում»:

Հերմանը դողում եր վագրի պես՝ անհամբեր սպասելով նշանակված ժամին: Յերեկոյան ժամի տասիննա արդեն կանգնած եր կոմսուհու տան առջև: Յեղանակը սարսափելի յեր. քամին վռոնում եր, թաց ձյունն իջնում եր փաթիլներով, ադոտ լուսավորում եյին լապտերները. փողոցները ամայի եյին: Հազվադեպ՝ վտիտ ձիով լըծված մի կառք եր անցնում դանդաղ, և կառապանը նայում եր ուշացած ուղևորին: Հերմանը կանգնած եր՝ հագին մի սյուրտուկ ու չեր դգում մինչ քամին, մինչ ձյունը: Վերջապես յերևաց կոմսուհու կառիթը:

Հերմանը տեսաւ, թե ինչպէս լակեյնիւրը
 կոմսուհու թևերն ընկած տնից դուրս բե-
 րին սամուշը քուրքով կոլոված կորամեջք
 այդ պառավին, և ինչպէս նրա յետևից բա-
 րակ թիկնոցով, գլուխը թարմ ծաղիկներով
 զարդարւած, արագ կառնթ մտաւ նրա սա-
 նուհին: Դռնակները փակեցին: Կառնթի
 անիվները ծանր թավալեցին փափուկ
 ձյունի վրայով: Շվեյցարը փակեց տան
 դռները: Պատուհաններն աղոտացին: Հեր-
 մանը սկսեց անց ու գարձ անել ամայա-
 ցած տան մոտ. նա մոտեցաւ լապտերին,
 նայեց ժամացույցին,—տասնմեկն անց ևր
 քսան րոպէ: Նա մնաց լապտերի տակ կանդ-
 նած աչքերը ժամացույցի սլաքին հառած.
 սպասելով մնացած րոպէների լրանալուն:
 Ծիշտ տասներկուսի կիսին նա վոտ դրեց
 կոմսուհու տան մուտքը և մտաւ սլաքածառ
 լուսավորւած սրահը: Շվեյցարը աչնտեղ
 չեր: Հերմանը սանդուխքով վազեց վեր,
 բացեց նախասենյակի դռները և տեսաւ
 ծառային լամպի տակ հնամենի կեղտոտ-

ված թիկնաթուղի մեջ քնած: Թեթև ու հաս-
տատ քայլով Հերմանն անցավ նրա մոտով:
Դահլիճն ու հյուրասրահը մուլթն էյին:
Նախասենյակի լամպը աղոտ լույս եր-
սփռում աչնտեղ: Հերմանը մտավ ննջա-
րան: Տապանակի առջև, վորը լի յեր վա-
ղեմի սրբապատկերներով, վառվում եր
վոսկյա կանթեղը: Խունացած շտոֆի³⁹⁾
թիկնաթուղներն ու լազմոցները բմբուլե
լարձերով՝ վրաներից վոսկեթելը իջած,
տխուր համաչափությամբ դրված էյին
չինական պատտառներով ծածկված պատե-
րի տակ: Պատի վրա կախված էյին յերկու
պորտրե, նկարված Փարիզում M-me Leb-
run-ի⁴⁰⁾ ձեռով: Նրանցից մեկը պատկերում
եր քառասուն տարեկան մի տղամարդ,
կարմրադեմ ու լիք կաղմվածքով, բաց-կա-
նաչավուն համազգեստով և կրճքին աստղ,
մյուսը՝ մի ջահել դեղեցկուհի, արծվաքիթ,
մազերը քունքերից յետ սանրած ու փոշե-
ցան մազերի մեջ մի վարդ: Բոլոր անկյուն-
ներում յերևում էյին հախճաղապյա փոք-

րիկ հովիվներ, ճաշարանի ժամացույցը՝
գործ պանծալի Leroy-ի⁴¹), տուփիկներ,
վոլորակներ, հովհարներ և կանաչի դա-
նադան խաղալիքներ, վորոնք հնարված
եյին անցյալ դարի վերջին Մոնգոլֆերյան
գնդի և Մեսմերյան մագնետիզմի⁴²) հետ
միասին։ Հերմանն անցավ շիրմալի յետևը։
Այնտեղ մի փոքրիկ յերկաթյա մահճակալ
եր դրված։ աջ կողմը գտնվում եր մի դուռ,
վորը տանում. եր դեպի կարինետ, ձախից
—մի ուրիշը՝ դեպի միջանցք։ Հերմանը
բացեց այն, տեսավ մի նեղ, վոլորուն
սանդուխք, վորը խեղճ սանուհու սենյակն
եր տանում... Սակայն նա յետ դարձավ և
մտավ մութ կարինետը։

Ժամանակը դանդաղ եր անցնում։ Ամեն
ինչ խաղաղ եր։ Հյուրասրահում խփեց տա-
ներկու ժամը. լոլոր սենյակներում մեկը
մյուսի յետևից ժամացույցները զննողով
խփեցին տասներկուսը, — և ամեն ինչ լռեց
նորից։ Հերմանը կանգնել եր, սառը վա-
ռարանին հենված։ Նա հանդիստ եր. նրա

սիրտը բաբախում էր հավասար, վորպես
 սիրտը մի մարդու, վորը վճռել և կատա-
 րել մի ինչ-վոր վտանգավոր, սակայն ան-
 հրաժեշտ բան: Ժամացույցը խփեց առա-
 վոտյան մեկ և չերկու ժամերը—և նա լսեց
 կառնթի հեռավոր զղրդոց: Անսպասելի մի
 հուզում համակեց նրան: Կառնթը մոտե-
 ցավ և կանգ առավ: Մարդիկ վաղեցին,
 լավեցին ձայներ և տունը լուսավորվեց:
 Ննջարան վաղեցին յերեք ծեր աղախին-
 ները, և կոմսուհին, հազիվ կենդանի ներս
 մտավ ու ընկավ վոլտերյան թիկնաթոռի⁴³)
 մեջ: Հերմանը նայում էր ճեղքի միջով.
 Լիզավետա Խմանովնան անցավ նրա մոտով.
 Հերմանը լսեց նրա շտապ քայլերը սան-
 դուխքի աստիճանների վրա: Յերիտասարդի
 սրտում արձագանք տվեց խղճի խայթի
 պես մի բան և նորից լսեց: Նա քարացավ:

Կոմսուհին սկսեց հանվել հայելու առջև:
 Սպասուհիները հանեցին վարդերով զար-
 դարված չամչիկը. վերցրին փոշեծածկ
 կեղծամը նրա սպիտակած ու կարճ խու-

դած գլխից: Բորոցները անձրևի պես տե-
ղացին նրա շուրջը: Արծաթակար դեղին
դգեստն իջավ նրա ուռած վոտներին: Հեր-
մանը տեսնում էր նրա հարդարանքինող-
կալի գաղտնիքները, վերջապես կոմսու-
հին մնաց քնելու կոփոացով և գիշերային
չամչիկով, այդ հագուստով, վսր ավելի եր
հատուկ նրա ծերությանը, նա ավելի քիչ
սարսափելի ու այլանդակ եր թվում:

Ինչպես բոլոր ծեր մարդիկ առհասարակ,
կոմսուհին տառապում էր անքնությամբ:
Հանվելուց հետո նա նստեց պատուհանի
մոտ, վոլտերյան թիկնաթոռի մեջ և սպա-
սուհիներին արձակեց: Մոմերը դուրս տա-
րան, սենյակը նորից լուսավորում էր
միայն կանթեղը: Կոմսուհին նստել էր
ամբողջովին դեղնած, կախ ընկած շրթունք-
ները շարժելով և աջ ու ձախ ճոճվելով:
Նրա պղտոր աչքերի մեջ յերևում էր մտքի
կատարյալ բացակայություն. նա յելով
նրան՝ կարելի չէր կարծել, Վոր սարսափե-
լի պառավի ճոճումն առաջանում և վնչ

Թե նրա կամքից, այլ թաքուն գալվանիզմի ներգործությունից:

Հանկարծ անբացատրելի կերպով փոխվեց այդ մեծած դեմքը: Շրթունքները դադարեցին շարժվելուց, աչքերը կենդանացան. կոմսուհու առջև կանգնած եր մի անծանոթ տղամարդ:

— Մի վախենաք, ի սեր ասածո, մի վախենաք,—ասաց նա լսելի ու հանդարտ ձայնով:—Յես գիտալորությունն չունեմ ձեզ վնասելու, յես չեկել եմ ձեզնից մի վողորմածությունն խնդրելու:

Պառավը լուռ նայում եր նրան և թվում եր, թե չի լսում: Հերմանը յենթադրեց, վոր նա խուլ և և խոնարհվելով նրա ա-կանջի տակ, կրկնեց միևնույնը: Պառավն առաջվա պես լուռ եր:

— Դուք կարող եք,—շարունակեց Հերմանը,—իմ կյանքը յերջանկացնել և դա չնչին բան և ձեզ համար, յես գիտեմ, վոր դուք կարող եք չերեք խաղաթուղթ մի-անդամից գուշակել:

Հերմանը կանգ առավ: Թվում էր, թե կոմսուհին հասկացավ, թե իրենից ի՞նչ են ուղում. թվում էր, թե նա բառեր և փրճառում իր պատասխանի համար:

— Դա կատակ էր, — ասաց պառավը վերջապես, — յերգվում եմ ձեզ, դա կատակ էր:

— Դրանով կատակ չեն անի, — բարկացած առարկեց Հերմանը: — Հիշեցեք Չապլիցկուն, վորին դուք ոգնել եք տանուլ տվածը չեա բերելու:

Կոմսուհին ըստ յերևույթին շփոթվեց: Նրա դիմադժերը պատկերում էին հոգեկան մի ուժեղ աշխատանք, սակայն նա նորից ընկավ նախկին անզգա դրուժյան մեջ:

— Կարո՞ղ եք, արդյոք — շարունակեց Հերմանը, — հայտնել ինձ այդ յերեք ըստույգ խաղաթղթերը:

Կոմսուհին լուռ էր: Հերմանը շարունակեց.

— Ո՞ւմ համար պիտի պահեք ձեր գաղտ-

նիքը: Թոռների՞ համար: Նրանք առանց
 դրան ել հարուստ են. նրանք ի՞նչ գիտեն
 դրամի հարգը: Դրամ վատնողին չեն ոգնի
 ձեր յերեք խաղաթղթերը: Ով չի կարող
 պահպանել հայրական ժառանգութունը,
 միևնույն ե, նա չքավորության մեջ կմեռ-
 նի, ինչպիսի գիւլային ջանքեր ել ուզի
 գործ դնել: Յեա վատնիչ չեմ. յես դրամի
 հարգը գիտեմ: Ձեր յերեք խաղաթղթերը
 ինձ համար չեն կորչի: Դեհ...

Նա կանգ առավ և սրտդողով սպասում
 եր պատասխանի: Կոմսուհին լուռ եր. Հեր-
 մանը ծռակ չոքեց:

— Յեթի յերբեք,—ասաց նա,—ձեր
 սիրտը սիրո զգացում ե իմացել, յեթի
 դուք հիշում եք նրա բերկրանքները, յեթի
 դեթ մի անգամ դուք ժպտացել եք նորա-
 ծին վորդու լացի ժամանակ, յեթի մարդ-
 կային վորեք բան յերբեքից թրթրացել և
 ձեր կրծքում, ապա թախանձագին խնդրում
 եմ ամուսնու, սիրուհու, մոր զգացմունք-
 ներով, — աչն ամենով, ի՞նչ սուրբ և կյան-

քում,—մի՛ մերժեք իմ խնդիրը,—հայտնեցեք ինձ ձեր դադանիքը,—ձեր ինչի՞ն ե պետք այն... Մի դուցե դա կապված ե սոսկալի մի հանցանքի հետ, հավիտենական յերանության խորտակման հետ, դիվային մի պայմանադրության հետ... Մտածեցեք. դուք ծեր եք, այլևս շատ չեք ապրելու,—յես պատրաստ եմ իմ հոգու վրա վերցնելու ձեր մեղքը։ Միայն թե՛ հայտնեցեք ինձ ձեր դադանիքը։ Մտածեցեք, վոր մի մարդու չերջանկությունը ձեր ձեռքումն ե գտնվում, վոր վո՛չ միայն յես, այլ իմ վորդիները, թոռներն ու ծոռները կորհնեն ձեր հիշատակը և վորպես սրբություն կհարգեն...

Պառաւլը վոչ մի բառով չպատասխանեց։
Հերմանը վեր կացավ։

—Ջադո՛ւ պառաւլ,—ասաց նա ատամները սեղմելով.—վոր աչքս ե, կստիպեմ քեզ պատասխանելու...

Այդ խոսքերի հետ նա գրպանից հանեց ատրճառակը։

Ատրճանակը տեսնելուն պես՝ կոմսուհին յերրորդ անգամ արտահայտեց ուժեղ ապրուսներ, նա գլխով արաւ ու ձեռքարճրացրեց, ասես կրակոցից պաշտպանւելով... Հետո գլորվեց մեջքի վրա... ու մնաց անշարժ:

— Վերջ տվեք յերեխայություններ անելուն, — ասաց Հերմանը բռնելով նրա ձեռքը, — Վերջին անգամն եմ հարցնում. ուղճւմ եք ինձ հայտնել ձեր յերեք խաղաթղթերը — այո՛ թե վոչ:

Կոմսուհին չեք պատասխանում: Հերմանը տեսաւ, վոր նա մեռել է:

IV

7 Mai 18...

Homme sans mœurs et sans religion⁴⁴⁾

Կամակագրութիւն

Լիզաւիտա Իվանովնան նստած եր իր սենյակում, դեռևս պարահանդեսի շորերով, ընկղմված խոր մտածմունքների մեջ: Տուն վերադառնալով նա շտապեց արձակել քնով անցած աղջկան, վորը դժկամորեն իր ծառայութիւնն եր առաջարկում նրան, — ապա, վոր ինքը կհանի շորերը և սրտի թրթռումով մտաւ իր սենյակը, հուսալով աչնտեղ գտնել Հերմանին և ցանկանալով չգտնել նրան: Առաջին հայացքից նա հավաստիացաւ նրա բացակայութեանը և գոհութիւն հայտնեց ճակատագրին աչն

խոչընդոտի համար, վորը խանգարեց նրանց տեսակցությունը: Նա նստեց առանց հան-
վելու և սկսեց վերհիշել այն բոլոր հան-
դամանքները, վորոնք այդպիսի կաթճ մի-
ջոցում ու այդքան հեռու տարան իրեն:
Չեր անցել յերեք շաբաթ այն ուրից, յերբ
նա առաջին անգամ պատուհանից տեսավ
յերիտասարդին և արդեն նամակագրության
մեջ եր նրա հետ, — և սա կարողացավ գի-
շերային տեսակցություն պահանջել իրե-
նից: Գիտեր նրա անունը միայն այն պատ-
ճառով, վոր նամակներից մի քանիսը նա
ստորագրել եր. յերբեք չեր խոսել հետը,
չեր լսել նրա ձայնը, չերբեք չեր լսել նրա
մասին... մինչև այսօր յերեկո: Տալորինակ
բան: Հենց այդ յերեկո, պարահանդեսում,
Տոմսկին հեղացած ջահել իշխանուհի Պո-
լինա ***-ից, վորը, սովորականի հակառակ
կոքեատություն եր անում վոչ իր հետ, —
ցանկացավ քննը հանել, անտարբերություն
յուլյց տալով նրան, նա հրավիրեց Լիզա-
վետա Իվանովնային և նրա հետ անվերջ

մազուերկա պարեց: Բոլոր ժամանակ նա
կատակում եր ինժեներական սպանների նը-
կատմամբ նրա ունեցած աչառության հա-
մար, հավատացնում եր, Վոր ինքը շատ
լավ գիտե, քան նա կարող և յենթագրել
և նրա կատակներից մի քանիսը աջնպես
հաջող ելին ուղղված, Վոր Լիզավետա Ի-
վանովնան մի քանի անգամ մտածեց, թե
իր պապտնիքը նրան հայտնի ե:

— Ո՞ւմնից եք իմացել այդ բոլորը,—
հարցրեց նա ծիծաղելով:

— Ձեզ հայտնի անձնավորության մտե-
րիմից,—պատասխանեց Տոմսկին,—մի շատ
հետաքրքիր մարդուց:

— Իսկ ո՞վ և այդ հետաքրքիր մարդը:

— Նրա անունը Հերման և:

Լիզավետա Իվանովնան վռչինչ չալա-
տասխանեց, բայց նրա ձեռներն ու վոտ-
ները սառուլյց կտրեցին:

— Այդ Հերմանը,—շարունակեց Տոմս-
կին,—իսկական ուսմանտիկ անձնավորու-
թյուն և. նա Նապոլեոնի պրոֆիլ ունի,

Մեֆիստոֆելի հոգի: Յես կարծում եմ, վոր նրա խղճի վրա ծանրացած ե առնվազը յերեք չարագործություն: Ի՞նչպես դուք գուհատվեցիք...

— Գլուխս ցավում ե... Ի՞նչ եր ձեզ առում Հերմանը,—կամ՝ Ի՞նչպես եր նրա տնունը...

— Հերմանը շատ անբավական ե իր բարեկամից. նա ասում ե, վոր նրա տեղ ինքը միանգամայն ալ կերպ կվարվեր... Յես մինչև իսկ յիշեցաւրում եմ, վոր Հերմանը ինքը դիտավորություններ ունի ձեր նկատմամբ, համեմայն դեպս նա բնավ անտարբեր չի լսում իր բարեկամի սիրահարական րացականչությունները:

— Բայց վճիռտեղ ե նա տեսել ինձ:

— Յեկեղեցում, կարելի չե,—գրոսսանքի ժամանակ... աստված գիտե նրան. կարելի չե՝ ձեր սենյակում, ձեր քնած ժամանակ. նրանից սպասելի չե...

Նրանց մոտեցող չերեք տիկիներ—
oubli ou regret⁴⁵) հարցով ընդհատեցին

խոսակցությունը, վորը տանջալից հետաքրքրական եր դառնում էիզավետա Իվանովնայի համար:

Տոմսկու ընտրած տիկինը ինքը իշխանուհի *** եր: Վերջինս ժամանակ ունեցավ նրա հետ բացատրվելու, մի ավելորդ շրջան պտտվելով և ավելորդ անդամ շուռ դալով իր ավթուռի առջև — Վերադառնալով իր տեղը Տոմսկին այլևս չեր մտածում վոչ Հերմանի, վոչ էիզավետա Իվանովայի մասին, վորը անպայման ուզում եր վերսկսել ընդհատված խոսակցությունը, սակայն յերաժշտությունը դադարեց և շուտով դրանից հետո ծեր կոմսուհին մեկնեց:

Տոմսկու խոսքերը վոչ այլ ինչեյին, յեթի վոչ մազուրկային շաղակրատանք, բայց դրանք խորն ընկան ջահել յերազոդուհու հոգու մեջ: Տոմսկու ուրվագծված պորտրեն նմանում եր այն պատկերին, վոր կազմել եր ինքը և շնորհիվ նորագույն ռոմանների, այդ՝ այլևս գոհիկ անձնավորությունը վախեցնում և գերում եր նրա յերևակայու-

թյուներ: Նա նստած եր, մերկ ձեռները
ծալած, գեռես ծաղիկներով զարդարված...
գլուխը բաց կրծքին խոնարհած: Հանկարծ
դուռը բացվեց, և ներս մտավ Հերմանը:
Նրա դողը բռնեց:

— Ո՛ւր ելիք դուք, — հարցրեց Լիզավե-
տա Իվանովնան վախեցած շշուկով:

— Ծեր կոմսուհու ննջարանում, — պա-
տասխանեց Հերմանը, — յես հիմա դուրս
յեկա այնտեղից: Կոմսուհին մեռավ:

— Աստված իմ... ի՞նչ եք ասում...

— Յեվ կարծեմ, — շարունակեց Հեր-
մանը, — յես եմ նրա մահվան պատճառը:

Լիզավետա Իվանովնան նայեց նրան և՛
Տոմսիկու խոսքերը հնչեցին նրա հագում.
այդ մարդու խղճի վրա ծանրա-
ցած ետևն վաղը յերեք չարագործ
ծուխ թյուներ: Հերմանը նստեց նրա մոտ՝
պատուհանի գոգին և ամեն ինչ պատմեց:

Լիզավետա Իվանովնան սարսափով լսեց
նրան: Յեվ ուրեմն, այդ կրքոտ նամակ-

ները, այդ բռնուն պահանջները, այդ հանդուգն, համառ հետապնդումը, այդ բոլորը սե՛ր չեր: Դրա՛մ, — ահա թե ինչ եր տենչում նրա հոգին: Ինքը չե, վոր պիտի կարողանար հագեցնել նրա ցանկությունները և յերջանկացնել նրան: Թշվառ սանուհին վոչ այլ ինչ եր, չեթե վոչ ավաղակի՝ փո ծեր բարերարուհուն սպանողի կույր ոգնականը... Դառն արտասովեց նա իր ուշացած, ցավազին զղջման մեջ: Հերմանը նայում եր նրան լո՛ւռ. նրա սիրտը նուշնալիս մորմոքվում եր, սակայն վո՛չ թշվառ աղջկա արցունքները, վո՛չ նրա վշտի զարմանալի հրապույրը չվրդովեցին նրա դաժան հոգին: Մեռած ծեր կնոջ մասին մտածելիս նա խղճի խայթ չեր զգում: Մի բան եր սարսափեցնում նրան, անդարձ կորուստը գաղտնիքի, վորից նա հարստացում եր սպասում:

— Դուք հրեշ եք, — վերջապես ասաց Լիզավետա Իվանովնան:

— Յես նրա մահը չեյի ցանկանում, —

պատասխանեց Հերմանը, — իմ ատրճանակը
լցված չի:

Նրանք լռեցին:

Առավոտը բացվում էր: Լիզավետա Ի-
վանովնան հանգցրեց ամբողջովին այրվող
մոմը. գունատ շողերը լուսավորեցին նրա
սենյակը: Նա սթրեց արտասովակեղ աչքերը
և նայեց Հերմանին. նա նստած էր պա-
տուհանի գոգին, ձեռները ծալած և դեմքը
ահարկու խոժոռած: Այդ դիրքում նա զար-
մանալի կերպով հիշեցնում էր Նապոլեոնի
պորտրեն: Այդ նմանութունն ապշեցրեց
մինչև իսկ Լիզավետա Իվանովնային:

— Ի՞նչպես պիտի դուրս գաք տնից, —
ասաց վերջապես Լիզավետա Իվանովնան:
— Յես մտածում եյի ձեզ տանել գաղտնի
սանդուխքով, բայց դրա համար պետք է
գնալ ննջարանի մոտով, իսկ յես վախե-
նում եմ:

— Ասացեք ինձ, թե ինչպես պետք է
գտնել այդ գաղտնի սանդուխքը. յես դուրս
եմ գամ:

Լիզալեատ Իվանովնան վեր կացալ,
կամոզից հանեց բանալին, տվեց Հերմա-
նին և մանրամասն ցուցմունքներ տվեց
նրան: Հերմանը սեղմեց նրա սառը, ան-
պատասխան ձեռքը, համբուրեց նրա խո-
հարհած գլուխը և դուրս չեկալ:

Նա իջալ վոլսրուն սանդուխքով և նո-
րից մտալ կոմսուհու ննջարանը: Մեռած
պառաւրը նստած էր քարացած. նրա դեմքը
խորին անդորրութուն էր արտահայտում.
Հերմանը կանգ առալ նրա առջև, յերկար
հայեց նրան, կարծես թէ ցանկանալով
հավաստիանալ սարսափելի խեղությանը.
Վերջապես մտալ կարինետ, պատահաւի տակ
շոշափեց դուռը և սկսեց իջնել մութ սան-
դուխքով, հուզված ոտարոտի զգացումներով:
Այդ նույն սանդուխքով, մտածում էր հա,
մի դուցե վաթսուն տարի առաջ հենց
նույն ննջարանը, նույն այս ժամին, նոր
կարած կաֆտան⁴⁶⁾ հագին, à l'oiseau roy-
al⁴⁷⁾ սանբլած, սրտին սեղմած իր յեռան-
կունի գլխարկը. գաղտագողի անցնում էր

յերիտառարդ յերջանիլը, վորը վաղուց
փտել և գերեզմանում, իսկ նրա զառամլալ
սիրունու սիրտը աչսոր դադարեց բաբա-
խելուց...

Սանդուխքի առակ Հերմանը մի զուռ
գտավ, վորը բացեց նույն բանալիով և
անսպասելի կերպով հայտնվեց միջանց-
քում, վոր իրեն վողոց դուրս բերեց:

Այդ գիշեր ինձ հայտնվեց
հանգուցալ բարոնուհի Ֆոն
Վ***, նա ամբողջովին սպի-
տակ շորերով երևաաց ինձ
«Բարե՛ ձեզ, պարոն խորհրդա-
կան»:

Շ վ ե դ ե u r q 48)

Ճակատագրական գիշերից յերեք ուր
հետո, առավոտյան ժամի իննին Հերմանը
ճանապարհ ընկավ դեպի այն վանքը, ուր
պետք է կատարեյին ննջեցյալ կոմսուհու
թաղման կարգը: Զղջում չզգալով, նա այ-
նուամենայնիվ չկարողացավ բոլորովին
խլացնել իր խղճի ձայնը, վոր անդադար
ուսում եր նրան. դեռ ես պառավին սպա-
նողը: Ճշմարիտ հավատ քիչ ունենալով
հանդերձ՝ նա ունեի բաղմաթիվ նախապա-

շարմուռներ, նա համարում էր, վոր մեռած
կոմսուհին կարող ե վառ ազդեցություն
ունենալ իր կյանքի վրա,—և վճռեց ներկա
լինել նրա թաղմանը, վորպեսզի նրանից
ներումն հայցի:

Յեկեղեցին լի յեր մարդկանցով: Հեր-
մանը հաղիվհազ կարողացավ ճանապարհ
բանալ խոնված ժողովրդի միջով: Դա-
վադը դրված եր ճոխ կատափալի⁴⁹⁾ վրա,
թավշյա բալդախինի տակ: Ննջեցյալը պառ-
կած եր նրա մեջ, ձեռքերը կրծքին ծալած,
հաշիագործ համչիկը գլխին և սպիտակ
ատլասե զգեստով: Շուրջը կանգնած եյին
նրա տան մարդիկ. ծառաները սև կաֆ-
տաններով, տոհմանիշով ժապավեններն
ուսերին և ձեռքերին մոմեր բռնած. ազ-
դականները խորին սգի զգեստներով.—վոր-
դիները, թոռները, թոռորդիները: Վոչ վոք
չեր լալիս. արցունքները une affectati-
on⁵⁰⁾ կլինեյին: Կոմսուհին այնպես ծեր
եր, վոր նրա մահը վոչ վոքի չեր կարող
վիշտ պատճառել և վոր նրա ազգական-

ները վաղուց նրան նայում էյին վորպես
 իր դարն ապրած մի մարդու: Ջահել յե-
 սիսկոպոսը դամբանական խոսք ասաց:
 Պարզ և հուզիչ արտահայտություններով
 նա ներկայացրեց խաղաղ վերափոխումը
 աստվածավախ կնոջ, վորի յերկար տարի-
 ները անդորր, սրտահուլզ նախապատրաս-
 տություն էյին քրիստոնեական վախճանի
 համար: «Մահվան հրեշտակը տարավ նրան,
 — ասաց հռետորը, — վոր արթուն էր, լի
 բարի մտադրություններով և ի սպասումն
 կես-գիշերային փեսացույին⁵¹)»): 1) Ընտրողու-
 թյունն ավարտվեց տխուր պատշաճավորու-
 թյամբ: Աղգահանները առաջինը մոտեցան
 մարմնին հրաժեշտ տալու: Հետո շարժվե-
 ցին նաև բաղմաթիվ հյուերերը, վորոնք
 յեկել էյին գլուխ խոնարհելու նրան, վորը
 այնքան վաղուց մասնակից էր իրենց
 ունայն ուրախություններին: Նրանցից հետո
 և բոլոր տնեցիք: Վերջապես մոտ յեկավ
 ննջեցյալի հասակակից, նրա պառավ տըն-
 տեսուհին: Յերկու ջահել որիորդներ թեան-

ցուկ տանում ելին նրան: Նա ույժ չուներ
մինչև գետին խոնարհվելու — և միայն նա
թափեց մի քանի արցունք, համբուրելով
իր տիրուհու սառը ձեռը: Նրանից հետո
Հերմանը վճռեց մոտենալ դագաղին: Նա
մինչև գետին գլուխ խոնարհվեց և մի քա-
նի բոլե պառկած եր սառը հատակին, ուր
յեղկնու ճյուղեր ելին շող տված: Վերջա-
պես վեր կացավ՝ գունատ, ինչպես ինքը
ննջեցյալը, վրա դրեց կատաֆալկի աս-
տիճանի վրա և թեքվեց... Այդ բոլեյին
նրան թվաց, Վոր մեռելը ծաղրաբար հա-
յացք նետեց իր վրա, մի աչքը կկոցելով:
Հերմանը, շտապ յետ-յետ գնալով, վտառ
սխալ դրեց և մեջքի վրա թրմվաց գետնին:
Նրան բարձրացրին: Նույն այդ ժամանակ
վանքի գավիթը դուրս բերին ուշաթափ
կիզավետա իվանովնային: Այս միջնա-
դեպը մի քանի բոլեյով վրդովեց մոռյլ
ծիսակատարության հանդիսավորութունը:
Ներկա գտնվողների մեջ բարձրացավ մի
խուլ տրտունջ, իսկ նիհարավուն կամեր-

հերը, ննջեցյալի մոտ աղգականը, շշնջաց
իր մոտ կանգնած անգլիացու ականջին,
վոր յերիտասարդ սպան կոմսուհու խորթ
վորդին և, անգլիացին ի պատասխան սառը
բացականչեց. Օհ!

Ամբողջ որը Հերմանը սաստիկ հուզված
եր: Հեռու մի պանդոկում ճաշելիս, նա,
հակառակ իր սովորության, շատ խմեց,
հուսալով խլացնել ներքին հուզմունքը:
Սակայն գինին ել ավելի բորբոքեց նրա
յերևակացությունը: Տուն վերադառնալով,
առանց հանվելու նա ընկավ մահճակալի
վրա և խոր քնեց:

Նա արթնացավ, յերբ արդեն գիշեր եր-
լուսինը լուսավորել եր նրա սենյակը: Նա
նայեց ժամացույցին՝ յերեքից պակաս եր
քառորդ: Դունն անցավ. նա նստեց մահ-
ճակալի վրա և մտածում եր ծեր կոմսուհու
թաղման մասին:

Այդ ժամանակ մեկը ներս նայեց պա-
տուհանից. — և իսկույն յետ քաշվեց: Հեր-
մանը վող մի աշադրություն չդարձրեց

դրան: Մի բոպե հետո նա լսեց, վոր նա-
խասենյակի դուռը բացում են: Հերմանը
կարծեց, վոր իր գենշչիկը⁵²⁾ սովորականի
պես հաբբած տուն ե վերադառնում գիշե-
րալին զրոսանքից: Բայց նա անծանոթ
քայլերի ձայն լսեց. մեկը քայլում եր,
տուֆլիները կամացուկ քստքստացնելով:
Դուռը բացվեց, ներս մտավ մի կին ճեր-
մակ շորերով: Հերմանը նրան իր ծեր
ստնտուի տեղ դրեց և դարձացավ, թե
ինչը կարող եր նրան բերել այդ ժամին:
Սակայն, ճերմակ կինը, սահելով հանկարծ
հայտնվեց նրա առջև,—և Հերմանը ճանա-
չեց կոմսուհուն:

— Յես քեզ մոտ յեկա հակառակ իմ
կամքի,—ասաց նա հաստատուն ձայնով,—
բայց ինձ հրամայված ե կատարել քո
խնդիրը: Յերեքնոցը, յոթնոցը և մեկնոցը
կտանեն քեզ համար իրար չետևից,—սա-
կայն այն պայմանով, վոր որ ու գիշեր-
վա մեջ մի խաղաթղթից ավելի չդնես և
վոր հետո ամբողջ կյանքումդ այլևս չխա-

դաս: Քեզ ներում եմ իմ մահը այն պայ-
մանով, վոր դու ամուսնանաս իմ սանու-
հի Լիզավետա Իվանովնայի հետ...

Այդ խոսքի հետ նա կամացուկ շուտ
լեկավ, գնաց դեպի դռները և անհետացավ:
Խուֆլիները քսաքստացնելով: Հերմանը
լսեց, թե ինչպես նա աղմուկով վրա դրեց
սրահի դուռը և տեսավ, վոր մեկը նորից
ներս նայեց իր պատուհանից:

Յերկար ժամանակ Հերմանը չէր կա-
րողանում սթափվել: Նա դուրս յեկավ
մոտ սենյակը: Դենշչիկը քնած եր հատա-
կի վրա: Հերմանը զորով արթեցրեց նրան:
Դենշչիկը սոփորականի պես հարբած եր-
նրանից վոչ մի բան չէր կարելի իմանալ:
Սրահի դուռը փակած եր: Հերմանը վերա-
դարձավ իր սենյակը, մոմը վառեց և գրի-
տռավ իր տետրիլը:

— Агаңде!⁵³⁾

— Ի՞նչպես դուք համարձակ-
վեցիք ինձ աгаңде? ասել:

— Ձերդ գերազանցութուն,
յես ասացի агаңде-с!⁵⁴⁾

Յերկու անշարժ գաղափարներ չեն կա-
րող միասին գոյութուն ունենալ բարոյա-
կան բնության մեջ այնպես, ինչպես յեր-
կու մարմիններ չեն կարող ֆիզիքական
աշխարհում ձիւնույն տեղը բռնել: Յերեք-
նոց, յոթնոց, մեկնոց—շուտով մթափնեցին
մեռած պառավի պատկերը: Յերեքնոց, յոթ-
նոց, մեկնոց—դուրս չեյին գալիս նրա
մտքից և շարունակ հնչում եյին նրա շըր-
թունքների վրա: Ջահել մի աղջիկ տեսնե-
լիս նա ասում էր. «Ի՞նչ բարեկազմն ե...
Իսկական բաղամի յերեքնոց», նրան հարց-

նուժ էյին, «վո՛ր ժամն է», նա պատաս-
 խանում էր. «յոթնոցից պակաս ե հինգ
 բոպե»: Ամեն մի հաստափոր տղամարդ
 նրան հիշեցնում էր մեկնուցը: Յերեքնոց,
 յոթնոց, մեկնուց հետապնդում էյին նրան
 քնի մեջ, ամեն տեսակ ձևեր ընդոհելով:
 Յերեքնուցը նրա առջև ծաղկում էր փար-
 թամ գրանդիֆլորի⁵⁵) ձևով, յոթնուցը
 պատկերանում էր գոթական դռների պես,
 մեկնուցը՝ վորպես վիթխարի մի սարդ: Նրա
 բոլոր մտքերը կենտրոնացան մի նպատա-
 կի վրա — ուզովել իրեն թանգ նստած գաղտ-
 նիքից: Նա սկսեց մտածել պաշտոնը թող-
 նելու և ճանապարհորդության մասին: Նա
 ուզում էր Փարիզի բաց խաղատներում
 գանձ կորզել կախարդված բախտից: Մի
 դեպք նրան փրկեց գլխացավանքից:

Մոսկվայում կազմվեց հարուստ խաղա-
 ցողների մի ընկերութուն, հռչակավոր
 Ջեկալինսկու նախագահությամբ, վորն իր
 տմբողջ կյանքը անց էր կացրել խաղա-
 թղթերի մեջ և յերբեմն միլիոններ էր դի-

զիւր, մուրհակներ տանելով և զուտ դրամ
տանուլ տալով: Յերկարամյա փորձով նա
վաստակեց իր ընկերների վստահությունը,
յսկ նրա հշուրընկալ տունը, շնորհալի խո-
հարարը, սիրալիրությունն ու խնդությունը
ձեռք բերին հասարակության հարգանքը:
Նա յիկավ Պետերբուրգ: Յերիտասարդու-
թյունը հեղեղի պէս թափվեց նրա տունը,
ի սեր խաղաթղթերի մոռանալով պարա-
հանդեսները և գերադասելով փարավոնա-
խաղի գայթակղությունները կնամոլության
հրապույրներին: Նարումովը Հերմանին
տարավ նրա մոտ:

Նրանք անցան մի շարք հոյակապ սե-
նյակներ, ի բարեկիրթ սպասավորներով:
Մի քանի գեներալներ և գաղտնի խոր-
հըրդականներ վիստ⁵⁶) եյին խաղում. յերի-
տասարգները նստել եյին, շտոֆյա բազ-
մոցների վրա թեք ընկած, պաղպաղակ
եյին ուտում և քաշում իրենց ծխամոր-
ձերը: Հյուրատանը, յերկար սեղանի շուրջը,
վորի մոտ խաղացողներ եյին խռնված,

նստած եր տանտերը և բանկ եր բռնել:
Նա վաթսուէն տարեկան մարդ եր ամենա-
պատկառելի արտաքինով, գլուխը պատած
եր արծաթե ճերմակ մազերով, լի և թարմ
դեմքը բարեսրտություն եր արտահայտում.
աչքերը վաշլում ելին մշտական ժպիտով
աշխուժացած, Նարումովը Հերմանին ներ-
կայացրեց նրան, Չեկալինսկին բարեկամա-
բար սեղմեց նրա ձեռքը, խնդրեց նրան
աղաա զգալ իր տանը և շարունակեց
խաղը:

Տալիան յերկար տեկց: Սեղանի վրա
դրված եր ավելի քան յերեսուն խաղա-
թուղթ: Սմեն թուղթ բաժանելուց հետո,
Չեկալինսկին կանգ եր առնում, վորպեսզի
խաղացողներին ժամանակ տա իրենց կար-
գադրություններն անելու, գրանցում եր
տանուէլ տվածը, քաղաքավարությամբ և
ուշադիր լսում եր նրանց պահանջները,
ավելի քաղաքավարի հարթում եր անու-
շադիր ձեռքով ծալած ավելորդ անկյուն-
ները: Վերջապես տալիան ավարտվեց, Չե-

կալինսկին թղթերը խառնեց և պատրաստ-
վեց նոր խաղի համար բաժանելու:

— Թույլ տվեք թուղթ դնել, — ասաց Հեր-
մանը, ձեռքը յերկարելով մի հաստամար-
մին պարոնի լետեից, վոր հենց այդ ժամանակ
խաղաց բանկ բռնողի դեմ: Չեկալինսկին
ժպտաց և գլխով արեց, լուռ, վորպես խո-
նարհ համաձայնութան նշան: Նաբուճո-
ւր ծիծաղելով շնորհավորեց Հերմանին՝
յերկարատե պասը լուծելու առիթով և
բախտավոր սկիզբ ցանկացավ նրան:

— Յես գնացի, — ասաց Հերմանը, կա-
վիճով խաղադումար մակագրելով իր թղթի
վերևում:

— Վճրքան, — հարցրեց բանկ բռնողը,
— ներեցեք, յես լավ չեմ ջոկում:

— Քառասունյոթ հազար, — պատասխա-
նեց Հերմանը:

Այդ խոսքերի հետ բոլոր գլուխները
շրջվեցին և բոլորն իրենց աչքերը սևեռե-
ցին Հերմանի յերեսին: — Խեղճը թույրեց, —
մտածեց Նաբուճովը:

— Թուզլ տվեք նկատել, — ասաց Չեկա-
լինսկին իր անվտուխ ժպիտով, — վոր ձեր
խաղը ուժեղ ե, դեռ վոչ վոք մի թղթի վրա
չերկու հարյուր յոթանասուն հինգից ավե-
լի չի դրել:

— Ի՞նչ անենք վոր, — առարկեց Հեր-
մանը. — խի՞ո՞ւմ եք իմ թուղթը թե վոչ⁵⁷):

Չեկալինսկին գլուխ տվեց նույն խոնարհ
համաձայնությամբ:

— Յես միայն ուզում եյի ձեզ հայտ-
նել, — ասաց նա, — վոր ընկերներիս վըս-
տահությանն արժանացած լինելով, յես չեմ
կարող բանկ բռնել վոչ այլ կերպ, քան
յեթե զուտ դրամով: Իմ կողմից յես, իհար-
կե, հավատացած եմ, վոր բավական ե ձեր
խոսքը, սակայն խաղի կարգի և հաշիվների
համար խնդրեմ դրամը դնեք թղթի վրա:

Հերմանը դրպանից հանեց բանկային
տոմսը և տվեց Չեկալինսկու, վորը թեթե
դնեցելով այն, դրեց Հերմանի թղթի վրա:

Նա սկսեց բաժանել թուղթը. աջ կողմն
ընկավ իննոցը, ձախում՝ յերեքոցը:

— Տարա՛ն,—ասաց Հերմանը, ցույց տալով իր խաղաթուղթը:

Խաղացողներին միջև շշուկ բարձրացավ: Չեկալինսկին դեմքը խոժոռեց, սակայն ժպիտն իսկույնս ևեթ վերակենդանացավ նրա դեմքին:

— Կհաճե՞ք ստանալ,—հարցրեց նա Հերմանին:

— Շնորհ արեք:

Չեկալինսկին գրպանից հանեց մի քանի բա՛կալին տոմսեր և իսկույնս ևեթ հատուցեց: Հերմանն ստացավ իր դրամը և հեռացավ սեղանից: Նարումովը շլմել եր: Հերմանը մի բաժակ լիճոճադ խմեց և ուղեորվեց տուն:

Մյուս ուրը յերեկոյան նա նորից հայտնվեց Չեկալինսկու մոտ: Տանտերը բաժանում եր: Հերմանը մոտեցավ սեղանին: Խաղացողներն իսկույնս տեղ տվին նրան: Չեկալինսկին սիրալիր գլուխ տվեց նրան:

Հերմանն սպասեց մինչև նոր տալիս, թուղթ դրեց, նրա վրա վեր գալով իր քա-

ուսանելով հաղարը և յերեկվա տարածը:

Ձեկալինակին սկսեց բաժանել. վալետն ընկավ աջ, յոթնոցը՝ ձախ:

Հերմանը բացեց յոթնոցը:

Բոլորը ախ քաշեցին: Ձեկալինակին ըստ յերևույթին շփոթվեց: Նա հաշվեց իննսուն-
չորս հաղար և ավեց Հերմանին: Հերմանը
ուսունասրտությամբ ընդունեց դրամը և
հենց նույն ըոպեյին հեռացավ:

Հաջորդ յերեկո Հերմանը նորից հայտ-
նվեց սեղանի մոտ: Բոլորն սպասում և-
յին նրան: Գեներալները և գաղտնի խոր-
հրդականները⁵⁸) թողին իրենց վիստը, վոր-
պեսզի տեսնեն այգքան անսովոր մի խաղ:
Յերիտասարդ սպաները վեր թռան բաղ-
մոցներից. բոլոր սպասավորները հավաք-
վեցին հյուրասրահում: Բոլորը շրջապատե-
ցին Հերմանին: Մյուս խաղացողները չը-
ղրին իրենց թղթերը, անհամբերությամբ
սպասելով, թե նա ինչով կվերջացնի: Հեր-
մանը կանգնած եր սեղանի մոտ, պատ-
րաստվելով մենակ խաղալ գունատ, սա-

կայն դարձյալ ժպտացող Չեկալինսկու դեմ:
Նրանցից յուրաքանչյուրը մի-մի կապուկ
թուղթ բերեց: Չեկալինսկին բաժանում
էր: Հերմանը հանեց և դրեց իր թուղթը,
ծածկելով այն մի սլառատ բանկային տոմ-
սերով: Դա նման էր մենամարտի:

Չեկալինսկին սկսեց բաժանել. նրա
ձեռները դողում էին: Այլ կողմում ընկալ
աղջիկը, ձախում մեկնոցը⁵⁹):

— Մեկնոցը տարածվեւ, — ասաց Հերմանը
և րացեց իր թուղթը:

— Ձեր աղջիկը զարկված է, — փաղաք-
շանքով ասաց Չեկալինսկին:

Հերմանը ցնցվեց. իրոք, մեկնոցի տեղ
նրա առջև ընկած էր սևի աղջիկը: Նա հեր-
հալատում, չհասկանալով, թե ինքը ինչպես
կարող էր ուրիշ թուղթ վերցնել:

Այդ րոպեյին նրան թվաց, Վոր սևի
աղջիկը աչքը կկոցեց և քմծիծաղ ավեց:
Արտասավոր նմանությունն աղչեցրեց
նրան...

— Պառնվեւ, — գոռաց նա սարսափած:

Չեկալինսկին իրեն քաշեց տարված
տոմսերը: Հերմանը կանգնած էր անշարժ:
Յերբ նա սեղանից հեռացավ, աղմկոտ խո-
սակցություն սկսվեց, — Հիանալի՜ խաղաց,
— ասում եյին խաղացողները: — Չեկալինս-
կին նորից խառնեց թղթերը: խաղը շա-
րունակվեց իր կարգով:

Յ Ե Ձ Ր Ա Փ Ա Կ Ո Ւ Մ

Հերմանը խելագարվեց: Նա նստած է
Որուխովյան հիվանդանոցում՝ 17-րդ հա-
մարում, վոչ մի հարցի չի պատասխանում
և արտասովոր արագ քրթմնջում է. — Յե-
րեքնո՛ց, յոթնո՛ց, մեկնո՛ց: Յերեքնո՛ց,
յոթնո՛ց, աղջիկ...

Լիզավետա իվանովնան ամուսնացավ
մի շատ սիրալիր յերխտասարդի հետ, վոր
ինչ-վոր տեղ ծառայում է և բավական կա-
րողություն ունի. նա ծեր կոմսուհու նախ-
կին կառավարչի վորդին է: Լիզավետայի

մոտ դաստիարակվում և նրա աղքատ ազ-
գականութիւն:

Տոմսիկն ռոտմիստրի⁶⁰) աստիճան և
ստացել և ամուսնանում և իշխանութի
Պոլինայի հետ:

1834

Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ձ Ի Ց

Պուշկինի այս յերկը առաջին անգամի
և հրատարակվում հայերեն: Թարգմա-
նությունը կատարված է հեղինակի կենդա-
նության որով լույս տեսած հետևյալ գըր-
քից, — «Повести, изданные Александром
Пушкиным», СПб 1834 г. Բոլոր ծանո-
թությունները (սակավ բացառությամբ)
քաղված են ռուսական նորագույն հրա-
տարակությունից — А. С. Пушкин, Изб-
ранная проза, редакция, примечания и
вступительная статья Д. Д. Благого, Гос-
литиздат, Москва, 1935 г.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1) Пиковая дама (խաղաթղթի նիշ)—«ոեի աղ-
ջիկը» «տեղը—աղջիկ» «աղաղ—աղջիկ»:

2) «Մալում եյին»—այն ժամանակվա թղթա-
խաղերի միջոցին, յերբ մեկը վորոշ գումար եր
դնում այս կամ այն թղթի վրա, անմիջապես ծա-
լում եյին այդ թղթի մի անկյունը՝ ըստ դրված
գումարի: Պուշկինյան եպոխայում թղթախաղը լայն
տարածում եր դառել ազնվական հասարակության
մեջ: Թունդ խաղամու եր և ինքը գրողը:

3) Չավելացնելով սկզբնական խաղագումարը:

4) Խաղի ժամանակ այնպիսի մի դրություն, յերբ
խաղացողը մի քանի թուղթ միմյանց հետեից ե տա-
նում:

5) Պարոլի ծախել—կրկնապատկել սկզբում դրված
խաղագումարը:

6) Բնագրում ПОНТИРОВАТЬ բառն և, վոր նշա-
նակում ե «բանկ» կամ «շտոտ» դնալ «բանկ» պա-
հողի դեմ՝ նա ով վորոշ գումար ե դնում և բաժա-
նում ե թղթերը. ПОНТИРОВАТЬ կարելի յե կամ
ամբողջ գումարը, վոր դրված ե բանկում, կամ նրա
մի մասը:

7) Մոսկովյան Վենեբրային (Վենեբրա—սիրո և դե-
ղեցկության աստվածուհին):

8) Դուքս Ռիշելյե, Սրման Դյուպլեսսի—այն ժա-
մանակվա ամենահայտնի կնամոլներից մեկը:

9) Փարավոն—լայն տարածված ազարտ խաղ, վոր-

րին կարող եյին մասնակցել անսահմանափակ թվով խաղացողներ:

10) Որլյանի դքսեր--Ռուբրոնները՝ Ֆրանսիական թագավորական տան կրտսեր ճյուղը:

11) Ֆէժմաներ--կետոսկրից շինած ուռուցիկ հարմարեցում, վորի վրայից հադնում եյին հին ձկնկանացի վերնադասու:

1.) Խոսքը կալվածատիրական դուզերի մասին ե:

12) Սեն Ժերմեն (մահացած մոտ 1795 թ.)--XVIII դարի քմենանշանավոր արկածախնդիրներից մեկը:

14) «Հավիտենական հրեան»--ըստ հրեական միջնադարյան լեզենդի վիրավորանք ե հասցրել Քրիստոսին ե այդ հանցանքի համար դատապարտված ե հավիտյանս թափառել յերկրի վրա:

15) Կենաց ելեկտիր--միջնադարյան ալքիմիկոսների պատրաստած խորհրդավոր մի նյութ, վորը իբրե թե բուժիչ զեղ ե յեղել բոլոր հիվանդություններից ե մշտական յերիտասարդության աղբյուր:

16) Փիլիսոփայական քար--նյութ, վորի ողնությամբ միջնադարյան ալքիմիկոսների ասելով կարելի յեր հասարակ մետաղները դարձնել վոսկի:

17) Կազանովա (1725--1768)--վենետիկցի հայտնի արկածախնդիր, վորը իր հուշերի մեջ տվել ե աշխարհիկ հասարակության նեխման գունեղ նկարագրությունը Ֆրանսիական բուրժ. հեղափոխության նախորդակին:

18) Վերսալ—Թադավորական հայտնի պալատ
Փարիզի մոտ, ուր գահակալությունն են ունեցել
ֆրանսիական Թադավորները սկսած Լյուդովիկոս
XIV-ի ժամանակից:

19) Թադուհու մոտ Թղթախաղի:

20) Այսինքն՝ բանկ պահողը:

21) Սոնիկ տանել—առաջին իսկ Թղթով շահել
բանկում գրված բոլոր գումարը:

22) Կեղծ Թղթեր. հեշտ սրբվող հատուկ փողիով
խաղաթղթի յերեսը ծածկում են մի կամ մի քանի
նշումներ, փոր հնարավորություն և տալիս պահանջ-
փող Թուղթը ցույց տալ:

23) Գաղտնի գիտելիքներ, փորոնցով իբրև Թե
ողտվել են միջնադարյան ալքիմիկոսները:

24) Ս. Գ. Ջորիչ—սերբ գյուղացի, փոր XV^{III} դ.
կեսերին Ռուսաստան եր յեկել. Պոտյոմկինի
ազյուտանտն (համհարդ) եր, հետադաշում դարձավ
գեներալ. Յեկատերինա II-ի բաղմաթիվ սիրական-
ներից մեկն եր և նրանից մեծամեծ պարզեկատվու-
թյուններ եր ստացել:

25) Պարոլի-պե ծալիլ—խաղադումարը քառա-
պատկել՝ սկզբնականի համեմատությամբ:

26) Ըստ յերեույթին դուք վճռականապես դերա-
դասո՞ւմ եք ազախիններին:

— Իհնչ կհրամայեք, տիրուհի: Նրանք ալիկի
թաբժ են:

27) Չեպեց—շլեսարի, վոր կրում էյին բարձր պատերին պատկանող կանաչք:

28) Մեծ մայր, տատ:

30) Բարե՛ ձեզ, որորդ Լիպա:

31) Պոլ (Պավել):

31) Ֆրեյլինա—սովորաբար բարձր ազնվական պատից սերված պալատական աղջկա Լուչում, վորը տրվում եր, յերբ նրանց բնդուհում էյին թագավորական ընտանիքի՝ բացառապես պանանց (թագուհիներ, այսպես կոչված «մեծ իշխանուհիներ») շքախմբի մեջ: Այս յերկի համար Պուշկինը, իր ասելով, նկատի յե ունեցել իշխանուհի Ն. Պ. Գոլիցինային (1741—1837), վորը ֆրեյլինա յե յեղել հինգ թագուհիների որով:

32) Կապոտ—կանացի վերնադրեստ:

33) Դանտե Ալիգիերի (1265—1321)—իտալացի մեծ բանաստեղծ: Իր կյանքի վերջին քսան տարին նա անցկացրեց վտարված հայրենի Ֆլորենցիա քաղաքից. ոտարության մեջ էլ մեռավ: Պուշկինի բերած տողերը կան Դանտեյի գլուխ գործոցի՝ «Աստվածային կատակերգություն» («La divina commedia») մեջ («Դրախտ» յերդ 17): «Դանտե և լինում ոտարի հացը և դժվար և բարձրանալ ու իջնել ոտարի սանդուխքներով»:

34) Վիդավիլ—դեմ ու դեմ, դիմացի. ավյալ դեպքում հասկացվում է այն դաման, վորը կաղրիլ պա-

րի մեջ կտնդնած և տղամարդկանց դեմ, ուրիշ դա-
մաների շարքում:

35) Եօճք—կուղւոյ, ջրշուն:

36) Յերկարավիզ՝ ծնկներից ել վեր կռիկներ,
վոր հազնում եյին զինվորականները: Շառաչուն—
խթաններով:

37) Դուք, հրեշտակս, չորս յերեսանոց նամակներ
եք գրում ինձ ավելի արագ, քան յես կարողանում
եմ կարդալ դրանք:

38) Որիորդ:

39) Շտոֆի—գործվածք:

40) Յելիզավետա Վիժե—Լեբրեն (1755—1842)
ժամանակի հայտնի դիմանկարչուհի:

41) Լերուա—անվանի ժամագործ:

42) Մոնդոլֆերյան դունդ—առաջին ողա-
պարիկը գյուտարարների՝ յեղբ. Մոնդոլֆյեների ա-
նունով: Մեմբեր (1733—1815)—գերմ. բժիշկ—
հիսնոդիտյոր, վորը առաջ մղեց այսպես կոչված
«կենդանական մազնետիզմի» հիպոթեզը, կենդանի
որդանիզմի մեջ հատուկ անկշռելի հեղուկի առկա-
յությունը, վոր իր ժամանակ մեծ վեճերի առիթ
տվեց և վորը հետագայում ժխտեց գիտությունը:

43) Վոլտերյան թիկնաթուռ—ֆր. նշ. փիլիսոփա և
պատմաբան Վոլտերի (1694—1778) անունով—բարձր
թիկունք ունեցող կաշեպատ խոր բազկաթուռ:

44) 7 մայիսի 18** թ.

Մարդ՝ առանց բարոյական և կրոնական հիմքերի:

45) «Մուսայրո՞ւմ թե՛ արեստանք»։ Կաղրիլ խաղալիս տղամարդը իր դամային պետք է ընտրեր պարեն մասնակցողներին միջից, վորոնք վորևե պայմանական բառով եյին կոչում իրենց։

46) Կաֆտան—տղամարդու վերնազգեստ լայն փեշերով։

47) «Կուռնիկի սկես»—հին ձևի սանրվածք։

48) Սվեդենբորգ (1688—1772)—շվեդ միստիկ դերոտ, վորի յերկասիրությունները «վոգիների» մասին մեծ ժողովրդականություն ունեյին XVIII դարի վերջում և XIX-ի սկզբում։

49) Դիսսեդան, վոր դրվում է վերեից և մասամբ կողքերից վարագուրած բալդախինի՝ ամսհովանու տակ։

50) Ձևայում։

51) Կես-դիշերային փեսացու—այլաբանորեն Քրիստոսը (տես ավետարանային առակը «Խեղոք և հիմար կույսերի» մասին)։

52) Սպայական սպասավոր—զինվոր, սպասյակ։

53) Ատանդե—ֆր. attendez—բառի ազատված ձևն է—սպասեցե՛ք թղթախաղի ժամանակ նշանական կում է առաջարկութուն, վոր խաղացողը դումար չդնի։

54) Հին Ռուսաստանում, այսպես կոչված, աշխարհիկ հասարակության մեջ խոսակցության ժամանակ «Ե» հնչյունն հավելումը բառավերջում (առաջացել

և արծաթ—սեւ, արծաթ, աղա կոչականի կրճատումով, սկզբներում դնում ելին և «ԵՅ») արտահայտում եր շեշտված հարգանք, մեծ մասամբ՝ ստորաքարշ:

55) Մեծ ծաղիկներ ունեցող բույս:

56) Վիսա—թղթախաղի մի տեսակը:

57) Այսինքն՝ համաձայն եք խաղալ իմ դրած գումարի դեմ թե վոչ:

58) Тайный советник—քաղաքացիական աստիճաններից մեկը հին Ռուսաստանում:

59) Չեկալինսկին Հերմանի հետ շտոսս ե խաղում—ազատ խաղ, վորի կանոններով խաղացողներից մեկը թղթի կալոդի միջից ընտրում և (ցույց չտալով խաղաքանկ բռնողին) մի թուղթ, վորի վրա և վեր և գալիս վորոշ գումար. բանկ բռնողն սկսում և բաժանել մի ուրիշ կալոդից, թղթերը յերկու կողմ դնելով. յեթե ընտրված թղթին համապատասխանողը ընկնում և աջ, առաջ տանում և բանկ բռնողը, ձախ խաղեկը (սլոնտյորը):

60) Ռոտմիստը—հեծելասպա:

Թարգմ. Ս. Ս ու թ ի ա ո յ ա ն
 Պատ. խմբագիր՝ Ստ. Ջ ո Ր յ ա ն
 Տեխ. խմբագիր՝ Լ. Ո հ ա ն յ ա ն
 Տխտղոսաթերթը՝ Հ. Շ ա վ ա Ր Չ ի
 Սրբագրիչ՝ Ս. Շ ա հ բ ա ղ յ ա ն



Գլավոր խմբագիր Կ. 4476
 Պատվեր 1522, հրատ. 3963, տիրած 4000
 Յերևան, Պետհրատի տպարան, II Կնուսյանցի, № 4.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0037799

1852 & 1853

A $\frac{I}{3511}$

Very
commonly